# Ազգ

Azg

3-9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2025 ՈՒՐԲԱԹ 034(5858)

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Արժանին Յասմին Դում Թրագութին՝ «Կարպիս Փափազյան» մրցանակ

ՀԲԸ Միության «Կարպիս Փափազյան» միջազգային մրցանակն այս տարի կտրվի ճանաչված հայագետ **Յասմին Դում Թրագութին՝** «լայնածավալ հայանպաստ գործունեության, հետազոտությունների, կոնֆերանսների կազմակերպման, հայոց լեզվի, մշակույթի, պատմության, եկեղեցու եւ հայկական մշակութային ժառանգության վերաբերյալ բազմաթիվ հոդվածների եւ գրքերի համար»: Ավստրիական kathpress-ի ծանուցմամբ, մրցանակը կհանձնվի հոկտեմբերի 8-ին, ժամը 12.30-ին, Զալցբուրգի համալսարանում: 1986 -ին վիեննաբնակ Կարպիս Փափազյանի սահմանած մրցանակը պատվում է օտարերկրացի գիտնականներին՝ հայ մշակույթին, գիտությանը ծառայելու, ազնիվ վաստակի համար: Կանդրադառնանք:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Հարեւանի էմոցիան եւ մերոնց հոգացավությունը

Ինչ փափկասիրտ, նրբազգած մարդ է ՀՀ Անվտանգության խորհրդի (Ախ) քարտուղար Արմեն Գրիգորյանը: Մեր հայտնի հարեւանի համար տրոփող նրա սիրտը վրդովվել է ի լուր այն քննադատությունների, որոնք մամուլում, համացանցում թե հասարակական մտածողության մեջ ուղղված են մեր Սրբազան լեռան՝ այսպես կոչված պետական «օտարումին», Արարատյան սիմվոլի օգտագործման արգելումին՝ նախ անձնագրերում, ապա, շուտով, հավանաբար, նաեւ պետական զինանշանի վրայից եւ ընդհանրապես:

Արմեն Գրիգորյանը հրապարակավ հանդիմանեց բոլորիս՝ իբր օրինակ բերելով Թուրքիային՝ «Հարեւանդ ի՞նչպես կարող է էմոցիաներ չունենալ ու չխռովել, երբ տանդ պատին տեսնի իր չսիրած կամ չուզած նկարը»: Այս պարագայում՝ «չսիրված, չուզված» նկարը մեր Մասիս սարն է, Արարատը, մեր Սուրբ լեռը:

Տեղեկացնենք նրան, որ թուրքերը մեր Արարատը կոչում են այլ անունով՝ «Աղրը դաղ», այսինքն՝ «Ցավի լեռ»: Թուրքերը թերեւս իրավունք ունեն հակապատմագիտական այդ անվանափոխությունը կատարելու, նկատի ունենալով հայկական հնագույն ավանդապատումը, ըստ որի Մասիսը չի սիրում չարագործներին ու պատժում, ցավ է պատճառում նրանց, ու երբեմն էլ՝ ոչնչացնում...

Հետեւաբար, պրն. Գրիգորյան, այդքան հուզվելու կարիք չկա, դա չի սազում պետական գործչին, կարիք չկա թուրքի էմոցիաներից ինքնե՛րդ էմոցիոնալ պոռթկումներ ունենալու, Արարատի դեմ պատերազմ հայտարարելու: Դա ճիշտ այն է, ինչը բնութագրել է Չարենցը՝ «Ինչպես Արարատին նետված մի քար»:

Սփոփվեք, բոլոր քար նետողներդ. մեր ժողովուրդն ի վերջո իր պետության սահմանների մեջ է առնելու Արարատը՝ նույն թուրքերին փրկելով իրենց ցավ (աղրը) պատճառող լեռից (դաղ), առանց էմոցիաների:

Իսկ դուք ցավո՞ւմ եք այդ հեռանկարից, իզուր: Մինչ այդ ձեզ եւ ձեր գործընկերներին, նաեւ Քլըչի բարեկամ Ռուբեն Ռուբինյանին մնում է նորից կարդալ ու հետեւել մեծն Ավետիք Իսահակյանի խորհրդին.

...Հերթը մի պահ քո՛նն է հիմա,
Դո՛ւ էլ նայիր սեգ կատարին
Ու անցիր:

***

Ու քանի որ խոսքը վերաբերում է Արարատին, որը գենետիկորեն նստած է յուրաքանչյուր նորմալ հայի մեջ, չենք կարող չհիանալ մեր այն բոլոր հայրենակիցներով, որոնք ամեն օր համացանցում տեղադրում են Սրբազան լեռան լուսանկարները: Խաղաղ, հանգիստ ու նպատակասլաց՝ նրանք իրենց, մեր, բոլորիս լուռ եւ սկզբունքային անհամաձայնությունն են հայտնում վայ-իշխանավորների տխմար արշավին ու կրկնում Իսահակյանի քերթվածի վերջին տողը, մանավանդ վերջին բա՛ռը: Երախտագիտություն նրանց ու նաեւ այն պաշտելի մայրիկներին ու տատիկներին, որոնք իրենց մատղաշ երեխաների ու թոռների մայրենի լեզվի դասագրքերում Մեսրոպ Մաշտոցի նկարներն են կպիչով (stiker) կպցնում, սրբագրելով կրթության նախարարի ու «Կառավարությունը ես եմ»-ի մյուս տխմարությունը:

***

Հարց է առաջանում. կարո՞ղ են թուրքերը վետո դրած լինեն, բացի Արարատից, նաեւ հայոց ու վրացիների այբուբենների ստեղծողի դեմ, առարկելով, օրինակ, որ Մեսրոպը ծնվել է Տարոն գավառի Հացեկաց գյուղում, այսինքն «թուրքական» հողում: Եվ կամ՝ կարո՞ղ է Իլհամը հետմահու persona non grata հայտարարած լինել Մաշտոցի դեմ՝ որպես խռովարարի, ահաբեկիչի ու ռեւանշիստի, որը 303 թ.ին որպես սահմանախախտ թափանցել է Արցախ՝ Ամարաս, դպրոց ու վանք կառուցել, անգամ՝ տեղի բնակիչների «խեցբեկագույն» (Խորենացու բնորոշումն է) բարբառը կարգի բերել՝ պրոպագանդիստական, օրինական իշխանությունների դեմ դավադրական հետին նպատակներով:

Այս ընթացքով, Արմեն Գրիգորյանը, խաղաղասիրակա՜ն նույն զգացումներով տոգորված նրա լծակից Ռուբեն Ռուբինյանը, ՔՊ-ական նրանց ընկերները, ղեկավարությամբ «Կառավարությունը՝ այդ ե՛ս եմ»-ի, շուտով կփոխեն Մատենադարանի, Երեւանի գլխավոր պողոտայի անունները, գուցե եւ՝ փակեն Օշականի եկեղեցին, արգելեն մարդկանց, հատկապես դպրոցականների մուտքը նկուղ, որտեղ գտնվում է Սիամանթոյի խոսքերով՝ «Ամենասուրբ գերեզմանը» Մեսրոպ Մաշտոցի: Ամեն բան հնարավոր է ներկա «իրական» Հայաստանում:

Ե՞րբ է ավարտվելու իբր դիվանագիտական, իրականում՝ անձնատուր լինելու այս տխմարությունը:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Վտանգավոր անտարբերություն

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Հայաստանի խորհրդարանում տեղի ունեցող գործընթացներն անգամ վկայում են, որ Հայաստանի քաղաքական ուժերը ակնհայտ արդեն իրենց զգում են նախընտրական տրամաբանության մեջ եւ բոլոր իրենց գործողություններն ու խոսքը սինքրոնացնում ա՛յդ տրամաբանությանը: Նրանք ուրիշ ոչինչ չեն նկատում, անգամ այժմ Իրանի շուրջ կատարվող վտանգավոր զարգացումները, ու խորհրդարանի ամբիոնից ընդդիմությանն ուղղված **Խաչատուր Սուքիասյանի** բնորոշումը, թե կարծես ընդդիմությունը այլմոլորակային լինի,կարելի է հավասարապես տարածել իշխանության վրա՝ աշխարհն աշխարհով, դուք իշխանության գալու կամ իշխանություն պահպանելու մեն-միակ մտահոգությամբ, ու մոտակա ժամանակի մեջ երբ Իրանին հարվածեն, ու այդ պատճառով Հայաստանի անվտանգության հետ կապված եւս խնդիրներ առաջանան, ապա տեսնես նույն դեմքի արտահայտությամբ կշարունակե՞ք մինյանցից դավաճան ստանալու «հզոր» ջանքերը:

⇨7

## «Անտարբերություն կա թե՛ միմյանց, թե՛ թշնամու բանտում տառապողների նկատմամբ»

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*«Արցախի անկախության ճանաչմանը պիտի հաջորդեր Հայաստանին միավորումը: Արցախն է ձեւավորել դիվանագետի աշխատանքի նկատմամբ իմ սերը: Երբ փոքր էի եւ խնդիրն ամբողջությամբ չէի հասկանում, ասում էի՝ պետք է լինեմ այն մարդը, որ ՄԱԿ-ի դիմաց կբարձրացնի Արցախի դրոշը: Առաջին անգամ ՄԱԿ-ի դիմաց հայտնվել եմ Արցախի ամբողջական կորստից հետո: Դրանից հետո շատ դժվար է ամեն օր երազանք վերագտնելը: Աշխատում եմ, որ այն չկորցնեմ: Մենք սովոր չենք ապրել անհատական երջանկության մակարդակում, Արցախում երջանկությունը կոլեկտիվ էր», ասում է Արցախի մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը, որի հետ «Ազգի» նախորդ համարում սկսված մեր զրույցի շարունակությունը՝ տորեւ:*

**-Պարոն Ստեփանյան, Բաքվի բանտում գտնվող ռազմագերիների եւ պատանդների լուսանկարներով պաստառ կա միայն Երեւանում ԼՂ ներկայացուցչության առջեւ: Պաստառի վրա գրված է, թե «Բաքվում ազատինի պահվող պատանդների հարցը համահայկական օրակարգ է»: Ինչո՞ւ օդանավակայանից սկսած Երեւանի մյուս փողոցներում, մարզերում չենք նկատում նման պաստառներ:**

- Որովհետեւ պետական քաղաքականություն չկա: Եթե դա պետության համար առաջնահերթություն լիներ, այդ ուղերձը վիզուալ կերպով պետությունը կփոխանցեր Հայաստան այցելող մարդկանց: Մի երկու տեղ, Բաղրամյան փողոցում եղել է: Հիմա չկա: Ենթադրում եմ, որ համայնքային իշխանություններն են հանել տվել: Փոքր թղթի վրա տպագրված, տարբեր տեղերում փակցված եղել է, Հյուսիսային պողոտայում նաեւ թռուցիկներ են բաժանվել, բայց համաձայն եմ, որ շատ քիչ է: Հայաստանյան հանրության համար կարծես այդ հարցը մեծ կարեւորություն չունի: Մեծ հաշվով գերիների ճակատագրով հետաքրքրված կամ առնվազն որոշակի աշխատանք տանում են իրավապաշտպանները՝ թե՛ արցախյան, թե՛ հայաստանյան, մտահոգ են հարազատները, բարեկամները եւ որոշակի սեգմենտ, որ ՄԱԿ-ի դիմաց մասնակցել է հավաքներին: Շատ քիչ մասնակցություն է եղել, ցավով եմ ասում, բայց դա է իրականությունը: Անտարբերություն կա թե՛ միմյանց, թե՛ թշնամու բանտում տառապող մարդկանց նկատմամբ: Ինձ համար այդ անտարբերությունն անհասկանալի է:

**-Ռազմագերիներն ու պատանդները մեր ընտանիքի ադամներն են: Ես էլ մեղավորության զգացում ունեմ, որ լուռ ենք: Միգուցե պատանդների ընտանիքները, նրանց հարազատները հասարակությանն արթնացնեն, թե այս լռությունը համակերպվելու բան չէ:**

-Նրանք որոշակի կաշկանդվածություն ունեն. հրապարակային խոսել վախենում են, թե կարող է որեւէ բան ասեն, դա հասնի Ադրբեջան, իրենց հարազատների հանդեպ հաշվեհարդար լինի, փորձեն վնասել: Իրենց հոգեբանորեն հասկանում եմ: Որպես իրավունքների պաշտպան այդ կարծիքին չեմ: Որքան շատ բարձրաձայնվի, միջազգային մամուլին հասնի, այդքան ավելի հնարավոր կլինի երաշխավորել, որ որեւէ խոշտանգման չեն ենթարկվի:

⇨3

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

# Ինչո՞ւ է Դոնալդ Թրամփն Իրանին առաջարկում միանալ հակաիրանական կոալիցիայի

Սեպտեմբերի 29-ին Իսրայելի վարչապետ **Բենյամին Նեթանյահուի** հետ երկկողմ հանդիպման ժամանակ ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփը** ի թիվս այլ հարցերի անդրադարձել է նաեւ «Աբրահամի համաձայնագրին» Իրանի միանալու հնարավորությանը եւ հույս հայտնել, որ պաշտոնական Թեհրանը դրականորեն կարձագանքի իր առաջարկին:

Հայտնի է, որ «Աբրահամի համաձայնագիրն» ամերիկյան նախաձեռնություն է, որի նպատակն է աջակցել Իսրայելի եւ արաբական երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը:

Համաձայնագիրը ստորագրվել է 2020-ին, եւ նախաձեռնողները ձգտում են ընդլայնել դրա շրջանակը՝ ներգրավելով նոր պետությունների:

Որեւէ մեկի մոտ կասկած չկա, որ «Աբրահամի համաձայնագիրն» ընդգծված հակաիրանական ուղղվածություն ունի, եւ ժամանակին Իրանի էքսնախագահ **Հասան Ռոհանին** համաձայնագրի օրակարգ մտցնելը պաղեստինցիների ու մուսուլմանների նկատմամբ դավաճանական քայլ է անվանել՝ համոզմունք հայտնելով, որ այն ոչ թե տարածաշրջանի անվտանգության ապահովելու միտում ունի, այլ Պարսից ծոցին ու Իրանին մերձենալու նպատակ է հետապնդում: Ուստի այդ համաձայնագիրն անմիջապես Իրանի կողմից գնահատվել է որպես հակաիրանական միջոցառում: Դրանից ելնելով՝ Իրանը սկսել է վերապահ մոտեցում ցուցաբերել «Աբրահամի համաձայնագրին» միանալու ցանկություն արտահայտող երկրների նկատմամբ:



Չնայած Իրանի կողմից գործադրվող նախազգուշական քայլերին՝ Իսրայելը շարունակում է շահագրգռվածություն ցուցաբերել «Աբրահամի համաձայնագրին» միացած երկրների շրջանակի ընդլայնման ուղղությամբ եւ ձգտում է դրանում ներառել նաեւ Իրանին սահմանակից երկրներ, այդ թվում՝ Հայաստանն ու Ադրբեջանը: Թել Ավիվի նպատակը դիվանագիտական ուղիներով Իրան-ԱՄՆ տարաձայնությունները կարգավորելու այլընտրանքը ռազմական լուծումով փոխարինելն էր, որի համար Իսրայելում լայն արշավ էր ձեւավորվել՝ Ադրբեջանի Հանրապետությանը «Աբրահամի համաձայնագրին» մասնակից դարձնելու ուղղությամբ: Սա կարող է ավելի կարծրացնել Ադրբեջանի հակաիրանական կեցվածքը:

Շատերի մոտ հարց է առաջանում. ինչո՞ւ է Թրամփն այդպիսի անիրագործելի ու տարօրինակ առաջարկով դիմում Թեհրանին՝ իմանալով, որ առաջարկությունը մերժվելու է: Մի՞թե Թրամփը չգիտի, որ Իրանը ոչ մի պարագայում չի ստորագրի այնպիսի փաստաթուղթ, որտեղ առկա է նաեւ Թեհրանի կողմից չճանաչված Իսրայելի ստորագրությունը:

Այնուամենայնիվ, ո՞րն է Թրամփի առաջարկության հիմնական նպատակը:

Հնարավոր է, որ Թրամփը հակված չէ խորանալու «Աբրահամի Համաձայնագրի» էության մեջ: Կամ էլ դա համաշխարհային խաղաղությանը միտված Թրամփի հերթական քարոզչական քայլերից է: Դրանով ԱՄՆ-ը, միգուցե, ցանկանում է նաեւ Իրանի վրա դիվանագիտական եւ հոգեբանական ճնշում գործադրել: Թրամփը հավանաբար նաեւ այդ քայլով փորձում է Իրանի «դիմադրության ճակատում» պառակտում մտցնել եւ Իրանի ժողովրդին այլընտրանք առաջարկել:

# Իրանը չի ցանկանում վճարել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կնքված խաղաղության համաձայնագրի գինը

Հայաստանի Հանրապետության վարչապետը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդհանուր քննարկման ընթացքում արտասանած իր ելույթի ժամանակ ասել է, որ Ադրբեջանի նախագահը պետք է բացառի «Զանգեզուրի միջանցք» տերմինի օգտագործումը «Միջազգային խաղաղության եւ բարգավաճման **Թրամփի** ուղու» հետ կապված: Վարչապետը նշել է, որ «Զանգեզուրի միջանցք» տերմինը երբեք գոյություն չի ունեցել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պաշտոնական բանակցություններում: Սակայն **Նիկոլ Փաշինյանը** չի հստակեցրել՝ արդյոք ոչ պաշտոնական բանակցությունների ժամանակ եւս «միջանցք» եզրույթի շուրջ քննարկումներ չե՞ն եղել, եւ եթե նման քննարկումներ եղել են, ապա ի՞նչ պայմանավորվածություններ են ձեռք բերվել:

Ադրբեջանի նախագահի ելույթներում պարբերաբար հնչող «միջանցք» տերմինը մտահոգում է ոչ միայն ՀՀ գործող վարչապետ Փաշինյանին, որը վճռական քայլեր է ձեռնարկում՝ գալիք խորհրդարանական ընտրություններում վերարտադրվելու նպատակով, այլեւ՝ մեր հարավային հարեւան Իրանին:

Թեեւ Իրանի արտաքին գործերի նախարարությունը ողջունել է Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության պայմանագրի նախաստորագրումը՝ հայտարարելով, որ կայունությունն ու խաղաղությունը Կովկասում բարենպաստ միջավայր են ստեղծում տարածաշրջանի բոլոր երկրների համար, միեւնույն ժամանակ այն արտահայտել է իր մտահոգությունը՝ կապված «արտաքին միջամտության» հնարավոր բացասական հետեւանքների հետ:

Իրանցի քաղաքական մեկնաբան **Վալի Քալեջիի** կարծիքով, «արտաքին միջամտություն» արտահայտությունը վերաբերում է ԱՄՆ միջնորդությանը «Թրամփի ճանապարհի» ստեղծման գործընթացում եւ ամերիկյան ընկերությունների մասնակցությանն այդ միջանցքի կառուցման ու կառավարման գործում:

Իրանական եւ Եվրասիական ուսումնասիրությունների ինստիտուտի (IRAS) կողմից լույս տեսնող պարբերականի վերջին համարում հրապարակվել է «Թրամփի ճանապարհի» առնչությամբ իրանական կողմի մտահոգությունների վերաբերյալ Իրանի Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի հարցերով հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ Վալի Քալեջիի ***«Իրանը չի ցանկանում վճարել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կնքված խաղաղության համաձայնագրի գինը»*** վերնագրով վերլուծական հոդվածը: Հոդվածում հեղինակը անդրադառնում է Իրանի տարանցիկ ուղիների վրա «Թրամփի ճանապարհի» տնտեսական եւ աշխարհաքաղաքական հնարավոր բացասական ազդեցության հետեւանքներին:

Քալեջին նշում է, որ Իրանի մտահոգության պատճառը այն է, որ այսպես կոչված «Թրամփի ճանապարհի» կառուցումը եւ վերահսկողությունը հանձնվել է ամերիկյան ընկերություններին, ինչը կարող է լինել ԱՄՆ-ի ռազմավարության մի մաս՝ ուղղված Իրանի մեկուսացմանը:

Նման մտահոգությունների հիմք, ըստ իրանցի վերլուծաբանի, հանդիսանում են 2025 թ. հունիսի 21-ին ԱՄՆ-ի կողմից Իրանի միջուկային օբյեկտների ռմբակոծումն ու Իսրայել-Իրան 12-օրյա պատերազմը: Իրանի գերագույն առաջնորդ այաթոլլա **Ալի Խամենեիի** խորհրդական **Ալի Աքբար Վելայաթիի** գլխավորությամբ որոշ պաշտոնյաներ քննադատել են այդ միջանցքի գաղափարը՝ հայտարարելով, որ այն «Թրամփի վարձկանների գերեզմանոցը» կդառնա:

Վերլուծաբանի փոխանցմամբ, Նիկոլ Փաշինյանի քաղաքական ընդդիմախոսները Հայաստանում նույնպես սատարել են Իրանի դիրքորոշումը՝ նշելով, որ Ադրբեջանի մուտքը դեպի Նախիջեւան՝ Հայաստանի տարածքով, ընկալվում է որպես Հայաստանի ինքնիշխանությանն ուղղված՝ արտաքին ճնշման տակ պարտադրված զիջում կամ նույնիսկ սպառնալիք:

Քալեջին իր հոդվածում անդրադարձել է նաեւ Իրանի նախագահ **Մասուդ Փեզեշքիանի**՝ 2025 թ. օգոստոսի 19-ին Հայաստան կատարած այցին, որի ընթացքում հայ պաշտոնյաները վստահեցրել են ԻԻՀ նախագահին, որ տվյալ միջանցքի կառուցումը բացասական ազդեցություն չի ունենա հայ-իրանական սահմանային հաղորդակցության, ինչպես նաեւ երկու երկրների տրանսպորտային եւ առեւտրային հարաբերությունների վրա:

Հոդվածում Վալի Քալեջին նշում է Իրանական կողմի հիմնական մտահոգությունները՝



**1. Ճանապարհի տեղակայումը**. Այն անցնում է Հայաստանի հարավով՝ Իրանի սահմանի հարեւանությամբ, ինչը առաջացնում է անվտանգության խնդիրներ: Իրանը ակնկալում է, որ Նախիջեւան տանող որեւէ ճանապարհ պետք է հնարավորինս հեռու լինի իր սահմանից՝ իր տարածքային անվտանգությունը պահպանելու համար:

**2. Տրանսպորտային խաչմերուկի հարցը**. «Թրամփի ճանապարհը» խաչվում է Հայաստանի հյուսիս-հարավ ավտոմայրուղու հետ, որի կառուցման մեջ ներգրավված են իրանական ընկերություններ: Իրանը պահանջում է երաշխիքներ, որ այդ խաչմերուկում խոչընդոտներ չեն առաջանա իր առեւտրային եւ տրանսպորտային գործունեության համար: Թվարկվում է, որ վերգետնյա կամ թունելային ճանապարհի կառուցումը կարող է դիտարկվել որպես տեխնիկական լուծում:

**3. Իրավասությունների հարցը**. Իրանը պահանջում է, որ Ադրբեջանի մուտքը դեպի Նախիջեւան պետք է գտնվի Հայաստանի կառավարության իրավասության ներքո: Սակայն Վաշինգտոնի օգոստոսի 8-ի համաձայնագրով ճանապարհի վերահսկողությունն ու անվտանգությունը վստահված են ամերիկյան ընկերություններին: Իրանը մտահոգված է, որ ամերիկյան վերահսկողությունը կարող է տարածվել նաեւ իր սեփական տրանսպորտային միջոցների վրա՝ սահմանափակելով առեւտուրը կամ քաղաքացիների տեղաշարժը:

Բացի վերը նշվածից, Քալեջիի գնահատմամբ՝ Իրանն այդ զարգացումները չի դիտարկում որպես իր շահերին համապատասխանող գործընթացներ, հաշվի առնելով Ադրբեջանի սերտ հարաբերությունները Իսրայելի հետ: Նրա դիտարկմամբ, Ադրբեջանի եւ Ռուսաստանի միջեւ լարվածությունը եւս կարող է անդրադառնալ Թեհրան-Բաքու հարաբերությունների վրա:

Վերլուծաբանը եզրափակում է, որ Ռուսաստանից հեռացող եւ Արեւմուտքին մերձենալու ձգտում ունեցող Կովկասի հեռանկարը, որը կարող է հանգեցնել տարածաշրջանային աշխարհաքաղաքական փոփոխությունների, նույնպես չի բխում Իրանի շահերից:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

# «Անտարբերություն կա թե՛ միմյանց, թե՛ թշնամու բանտում տառապողների նկատմամբ»

⇨1 Պիտի հասցնել միջազգային հանրությանը, նրանց կողմից եւս ակնկալել Ադրբեջանի վրա ճնշում, որը կնպաստի հարցի կարգավորման: Ամենայն անկեղծությամբ՝ այս եւ բազմաթիվ այլ հարցերում հայաստանյան հանրության մեջ ապրումակցման բացակայություն կա: Խոսքը չի վերաբերում միայն արցախցիներին: Պարզ օրինակ՝ երկու սրբազաններ հիմա դատվում են, կարո՞ղ եք ցույց տալ, որ հանրությունն ապրումակցում է: Անտարբերություն է: Մարդիկ ապրում են ներկա հաճույքներով: Իհարկե նաեւ հիասթափություն կա հանրային միջոցառումներից: Մարդիկ կան, որ բազմիցս տարբեր հանրահավաքների մասնակցել են, հիմա հանրահավաքի մասին չեն ուզում լսել, քանի որ համարում են, թե այն ոչ մի արդյունք չի տալիս: Տոտալ ապատիա կա:

**-Իսկ միգուցե հանրահավաքի ելույթներն են պատճառը, բանախոսների բովանդակազուրկ նախադասությունները, անվստահությունը:**

-Չեմ կարծում: Օրինակ բերեմ արցախյան հանրության մասով, քանի որ ավելի լավ եմ ճանաչում: 2025-ի մարտին հանրահավաք կազմակերպեցինք, 10 հազար մարդ մասնակցեց: Պահանջագրի 12 կետերից առաջին 6-ը վերաբերում էին սոցիալական աջակցությանը, մյուս կետերով ձեւակերպված էր վերադարձի, ռազմագերիների եւ պատանդների հարցն օրակարգ դարձնել, Արցախի պատմամշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ ռեալ քայլեր ձեռնարկել: Կառավարությունը միայն քննարկման առարկա դարձրեց սոցիալական բնույթի հարցերը, ստեղծվեցին աշխատանքային խմբեր, քննարկումներ եղան: Այն հարցերը, որ մեզ համար սկզբունքային էին, այդպես էլ լուծումներ չստացան: Դրանից հետո նոր հանրահավաք հայտարարեցինք, բայց շատ քիչ՝ 3,5-4 հազար մարդ մասնակցեց: Նվազ մասնակցությունը պայմանավորված է նրանով, որ մարդիկ չեն հավատում այլեւս, որ հանրահավաքով որեւէ խնդիր կլուծվի: Ես այն կարծիքի չեմ, որ պետք է հիասթափվել, բայց չեմ էլ կարող մարդկանց մեղադրել: Նույնը վերաբերում է գերիների հարցին. Թե՛ մեր, թե՛ **Ռուբեն Վարդանյանի** թիմի կազմակերպած հավաքներին շատ քիչ մասնակցություն է եղել: Ասում են՝ ԱԳՆ-ի դիմաց կանգնեմ, դրանով ի՞նչ է փոխվում:

**-Վերեւում նշեցիք միջազգային հանրության դերը: Դեռեւս հավատո՞ւմ եք:**

- Եթե միջազգային իրավունքի դիրքերից ենք նայում, չեմ հավատում, որ իրավական տեսանկյունից այս հարցը կարող է կարգավորման հանգել: Բայց հավատում եմ, որ ենթադրենք **Թրամփը** կարող է այդ հարցը լուծել, եթե նրա համար այդ հարցը դառնա օրակարգային: Կարծում եմ, որ պատանդների հարցն ամբողջությամբ քաղաքական դաշտում է: Ուկրաինական հակամարտության համատեքստում քննարկման առարկա է պատանդների վերադարձի հարցը: Նույն կերպ քննարկման առարկա կարող է դառնալ, երբ ՀՀ-ն այդ հարցով դիմի ԱՄՆ կամ ՌԴ իշխանություններին, եւ այդ երկրները շահագրգիռ լինեն, հնարավոր է այդ ձեւով հասնել հարցի լուծման: Օգոստոսի 8-ի տեսանյութում էլ երեւաց, որ Թրամփը հարցնում է Փաշինյանին՝ ձեզ համար կարեւոր է, չէ՞, 23 պատանդների վերադարձի հարցը: Լսեցինք **Փաշինյանի** պատասխանը՝ եկեք սա չդարձնենք քննարկման նյութ: Սա շատ կարեւոր հումանիտար բնույթի հարց է, եւ պարզաբանում չեղավ, թե ինչու չդարձնենք քննարկման նյութ:

**-Հարց ուղղե՞լ եք Փաշինյանին:**

-Ոչ, որովհետեւ Փաշինյանի հետ հաղորդակցության որեւէ միջոց չունեմ: Մենք համագործակցում ենք ամերիկյան քրիստոնեական կազմակերպությունների հետ, որոնք այս հարցն առաջնահերթ բարձրաձայնում են Թրամփի վարչակազմի առջեւ: Հույս ունեմ, որ այս մարդկանց ջանքերն ի վերջո արդյունք կունենան: Աշխատանք տարվում է ոչ թե ՀՀ-ի, այլ ԱՄՆ-ում ադվոկացիոն տարբեր խմբերի կողմից, դրոշակակիրն այս հարցում քրիստոնեական կազմակերպություններն են: Նրանցից մի պատվիրակության հետ այստեղ՝ ԼՂ ներկայացուցչության շենքում հանդիպել ենք: Պատվիրակությունը ՀՀ է այցելել Save Armenia («Փրկենք Հայաստանը») նախաձեռնության շրջանակներում: Թուֆենկյան հիմնադրամի ձեւավորված նախաձեռնությունն է, որի նպատակն է ամերիկյան քրիստոնեական շրջանակները Հայաստանի, հայ ժողովրդի շահերի, իրավունքների շուրջ մոբիլիզացնելը:



**-Ապրումակցման մասին խոսելիս համաձայն չեղաք, որ ռազմագերիների ընտանիքի անդամները պիտի հուշեն, պարտադրեն, որ մոռանալ չի կարելի: Եվրոպայում (նաեւ) լրագրության թեմա է դառնում անհատը, նրա ոտնահարված իրավունքը, նրա պայքարը: Օրինակ Գերմանիայում խոշորացվում է իսրայելցի մի մոր կամ հոր՝ իր պատանդառված զավակի տունդարձի սպասումը: Գերմանիայում հրեական համայնքը պահանջում է իրենց հայրենակցի տունդարձը: Թերահավատ ենք, բայց հանրության ուշադրությունն է գրավում, նաեւ մարդկանց միավորում: Ինչո՞ւ սա մեր օրինակը չենք դարձնում: Հրեաներն էլ կիրառել են մեր փորձը, երբ համակենտրոնացման ճամբարում, գետտոյում «Մուսա լեռան 40 օրերը» ձեռքից ձեռք փոխանցելով, դիմադրելու ոգին ամրապնդել են: Եթե Արցախից բռնագաղթած մեր հայրենակիցները պահանջ չունենան, հանրության մյուս մասն էլ պահանջելու կարեւորության մասին միգուցե մոռանա:**

-Մեր պարագայում էլ հանրահավաքին առաջին հերթին ներկա են պատանդների ընտանիքների անդամները՝ լուսանկարները բռնած: Համաձայն եմ՝ հրեաներից շատ բան ունենք սովորելու: Շրջափակումից սկսած՝ հանրահավաք բաց չեմ թողել: Մեծ է իմ հիասթափությունը՝ մարդիկ չեն գալիս: Արցախը դեկտեմբերի 12-ին հայտնվեց բլոկադայում, դեկտեմբերի 31-ին Երեւանի կենտրոնում տոնածառի լույսերի վառման արարողությանը ավելի շատ մարդ էր հավաքվել, քան ՄԱԿ-ի դիմաց մեր հայտարարած նստացույցին: Դուք ուզում եք ինձ համոզել, որ այդ մարդկանց հայացքը կարող ենք փոխել, թե կգան հանրահավաքի: Նրանք իրենց կյանքն են վայելում: Իրականությանն ուղիղ նայենք: Եղել եմ ԱՄՆ կոնգրեսում: Կոնգրեսմենների գրասենյակների առջեւ կա Իսրայելի դրոշը եւ պատանդների լուսանկարները: Չեմ տեսել որեւէ տեղ, որ ՀՀ դրոշ լինի, կամ՝ հայ պատանդների լուսանկարները: Սա խոսում է նրանց հնարավորությունների մասին: Մեր պատմությունը կմնա մեր մեջ: Մեր եւ հրեաների ազդեցությունը համաշխարհային գործընթացների վրա անհամեմատելի է: Իրենց ընդամենն առիթ է պետք, որ խոսեն հրեա պատանդների մասին: Մեր պարագայում դեռ պիտի համոզենք, որ խոսեն, նյութը տանք, որ խոսեն, միգուցե նաեւ այլ ձեւերով շահագրգռենք, որ խոսեն:

**-Հրեաներն Արցախում, նաեւ Դաշտային Ղարաբաղում վաղուց են բնակվել, բնակվում են: Ադրբեջանն անընդհատ շեշտում է նրանց դարավոր ներկայության մասին:**

-Արցախում հրեայի չեմ հանդիպել: Լսել եմ, որ ժամանակին, հատկապես հյուսիսային՝ Մարտակերտի հատվածում եղել են հրեաներ, հույներ, որոնց չեմ տեսել:

**- Ազգային տարբեր մեծ եւ փոքր խմբեր, նաեւ գերմանացիներ ապրել են Արցախում հայերի հետ: Դավիթ Բաբայանը ռուսերեն մի գիրք հրատարակեց այդ թեման արծարծելով: Հայաստանում ապրում են տարբեր փոքրամասնություններ, բայց Ադրբեջանն անընդհատ շրջանառում է, թե ՀՀ մոնոէթնիկ է: ՀՀ-ի էթնիկ խմբերի՝ հրեաների, քրդերի, եզդիների, հույների, ռուսների հետ կապ ունե՞ք:**

-Իհարկե: Շատ լավ ճանաչում եմ ազգությամբ հրեա ՌԴ-ից Հայաստան տեղափոխված մարդկանց, որ համայնք են ձեւավորել եւ 2020-ի սեպտեմբերի 27-ից հետո իրավապաշտպան մեծ աջակցություն են ցուցաբերել արցախցիներին: Նրանք շատ լավ տիրապետում են Արցախի պատմությանը: Արցախում էլ ունեինք հունական փոքրիկ համայնք, այստեղ էլ հույներ կան, որոնց հետ կապ ունենք: Արցախում կար հունական Մեհմանագյուղը, որ մեծ վնաս կրեց հատկապես առաջին պատերազմի ժամանակ: Հունաստանը կանչեց, տարավ հույներին, բայց մի քանի հոգի մնացին: Նրանցից էր հեռուստալրագրող **Սոֆի Իվանիդիսը**: Ռուսական համայնք կա Արցախում: Նրանք այնտեղ են, կապ կա, պարբերաբար խոսում ենք: Որքան էլ Ադրբեջանը փորձում է ցույց տալ աշխարհին, որ ՀՀ մոնոէթնիկ է, իսկ ինքը բազմամշակույթ, կան միջազգային բազմաթիվ զեկույցներ, օրինակ Եվրոպայի Խորհրդի զեկույցները, որ վկայում են Ադրբեջանում փոքրամասնությունների՝ թալիշների, ուդիների, լեզգիների իրավունքների տոտալ անտեսման փաստը: Ադրբեջանն էլ ամրագրել է, թե իր բնակչության 90 տոկոսն ադրբեջանցի է, ինչը վկայում է մոնոէթնիկ լինելու մասին: Իսկ ՀՀ-ում ազգային փոքրամասնություններն ավելի շատ իրավունքներ ունեն, քան Ադրբեջանում, եւ դա չի վրիպում միջազգային կառույցների ուշադրությունից: Ալիեւն ինչքան ուզում է, թող թմբկահարի:

**-Իսկ մենք չպատասխանե՞նք: Գիտական բազմալեզու ուսումնասիրություններով չհակադրվե՞նք:**

-Այն, որ միջազգային տարբեր կազմակերպություններ գնահատական են տալիս, նշանակում է Ալիեւի նարատիվները չեն «աշխատում»: Ուժն է իրեն արդյունքի հասցրել: Ինքը հարցը լուծել է ոչ թե դիվանագիտության, այլ՝ ռազմի դաշտում: Չեմ կարծում, թե հանրային դիվանագիտության դաշտում պարտվել ենք Ադրբեջանին: Տարբեր հարթակներում միշտ էլ մեր դիրքորոշումը բավականին ընկալելի է եղել: Եվրոխորհրդարանում, Կոնգրեսում ելույթ եմ ունեցել եւ տեսել, որ մեր դիրքորոշումներն ընկալում են: Բայց աշխարհում հիմա ռեալպոլիտիկն է հաղթում. ով հողի վրա կարողանում է հարցը լուծել, իրավունքը նրանն է:

ՀՀ-ում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ձայնն էլ սահմանափակ լսելի է իրենց մայր երկրների կառավարություններին: Իհարկե պետք է աշխատել: 20 հրեա գիտնականներ համատեղ կոչով դիմել են իշխանություններին, որ զերծ մնա Երուսաղեմի հայկական ժառանգության նկատմամբ ոտնձգությունից: Եվ սա համակարգված աշխատանքի արդյունք է:

*(շարունակելի)*

**Հարցազրույցը վարեց**
**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ**

# «Կարպիսն ինձ օժտել է աշխարհին սիրով նայելու հայացքով»

ԿԱՐԻՆԵ ՄԵՍՐՈՊՅԱՆ

**Թարգմանչուհի, Հայաստանի գրողների միության մշակույթի բաժնի պատասխանատու**

*Օրերս, ինչպես տեղեկացրել է արդեն «**Ազգ**» շաբաթաթերթը, Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանում տեղի ունեցավ տաղանդավոր գրող, թարգմանիչ **Կարպիս Սուրենյանի** ծննդյան 100-ամյակին նվիրված գրական հանդիսություն, որը կազմակերպել էին գրադարանը եւ Հայաստանի գրողների միությունը: Սակայն ես ցանկանում եմ «**Ազգ**»-ի ընթերցողներին ներկայացնել իմ օրագրային գրառումներից երկու պատառիկ, որ արվել է նրա ծննդյան 75-ամյակին նվիրված գրական երեկոյի առիթով. այն տեղի է ունեցել 2000 թ. սեպտեմբերի 28-ին Հայաստանի գրողների միության մեծ դահլիճում:*

***22 սեպտեմբերի, ուրբաթ, 2000 թ.***

*«Սիրենք գրականությունը. այս սերը մխիթարում է այլ սերերից եւ փոխարինում դրանց. կյանքի տվայտանքները չնչին են, երբ գագաթի վրա ես կանգնած. Ալպիանների բարձունքից ամեն ինչ փոքր է երեւում»:*

*Գյուստավ Ֆլոբերը՝ Համիլտոն Այդեին (անգլիագիր հայ հեղինակ)*

Տաղանդավոր արձակագիր եւ նույնքան տաղանդավոր թարգմանիչ, համեստագույն մարդ, մեզ շատ սիրելի Կարպիս Սուրենյանի ծննդյան 75-ամյակին նվիրված գրական երեկոն պետք է տեղի ունենա մեր մեծ դահլիճում սեպտեմբերի 28-ին: Օրեր առաջ պայմանավորվեցինք **Հրանտ Մաթեւոսյանի**[1] հետ, որպեսզի ելույթ ունենա. սիրով համաձայնեց եւ պատվիրեց կազմակերպել այնպես, որ այն արժանի լինի «սիրով լեցուն գրական աշխարհ ստեղծած» Կարպիս Սուրենյանին:

Վերջերս նա հաճախ է այցելում մեզ: Քննարկում ենք ծրագիրը, ելույթ ունեցողների ցանկը ճշտում. ամեն ինչ պետք է լինի իր ցանկությամբ եւ բարձրաճաշակ:

Իր անվանը ծանոթ եմ դեռեւս դպրոցական տարիներից՝ 1971 թվականից: «Բնիկ որտեղացի եք» գիրքը մեր տանը կարդում էինք բոլորս. մորեղբորս նվերն էր եւ շատ սիրելի էին գրողի օգնությամբ «հանդիպումները» ոչ միայն հայ ծանոթ ու անծանոթ, այլեւ օտար անունների հետ՝ Վիլյամ Սարոյան, Գուրգեն Մահարի, Հակոբ Հակոբյան, Հարություն Կալենց, Գոհար Գասպարյան, Ալան Հովհաննես, Մարտիրոս Սարյան, Լուսին Ամարա, Դմիտրի Շոստակովիչ, Սամուել Մարշակ եւ ուրիշներ: 7-րդ դասարանի աշակերտուհու համար այդ գիրքը զարմանահրաշ աշխարհ էր, որ սնում ու ճաշակ էր ձեւավորում:

Երեկոն առիթ էր՝ նորից ձեռք առնելու գիրքը. ասես այցելել էի «պատկերասրահ», որ «Գեղեցկություն» անունն ուներ. իր հրաշալի, անմիջական ու սրտահույզ խոսքին գեղեցկորեն միահյուսված էին երաժշտությունն ու նկարչությունը, որոնք պատումը դարձնում էին գերող ու գրավիչ: Պատահական չէր, որ նույն զգացողությունն էր նաեւ տարիներ առաջ, երբ վայելք էր նրա թարգմանությամբ Ջոն Գոլսուորդիի «Ասք Ֆորսայթների մասին» հսկայածավալ վիպաշարի ընթերցումը. ուսանողական տարիների ի՜նչ սրտատրոփ էի սպասում հատորների լույս ընծայմանը ու այնքան շնորհակալ էի թարգմանչին՝ երկրորդ-չորրորդ կուրսի ուսանողուհուս կյանքի այդ շրջանը լցնելու եւ գեղեցկացնելու համար: Հետո հաջորդեց այնքան բանաստեղծական «Ոգու ամրոցները», երբ հեղինակի «հետ» ըմբոշխնում էի «Ճամփորդության» հաճույքը. Հայաստան աշխարհով ճամփորդություն, որը գովերգություն էր հայոց արտ ու դաշտերի, սար ու ձորերի: Գրողը մեկ քայլելով, մեկ կանգ առնելով ու զմայլվելով «ոսկեհասկ ծփուն արտերով», անտառախիտ անդնդախոր ձորերով, լեռնային գետերի գահավիժող ջրերով, երկնի կապույտում մխրճված ծառերի բարձր կատարներով, կտրում-անցնում է հայոց բնաշխարհով, մեզ էլ մասնակից դարձնում կանչող «ոսկեշող հեռուների» հրաշքները տեսնելու եւ վայելելու բերկրանքին:

Կարպիս Սուրենյանին ընթերցելը միայն մեծագույն վայելք չէ. այն ճանաչողություն է, արվեստի անսպառ իմացություն, մարդու հոգեւոր աշխարհի եւ գեղագիտական բարձր ճաշակի ձեւավորում: Հաճելի են նրա հետ մեր երկար, չընդհատվող եւ ինձ հոգեհարազատ ու հարստացնող զրույցներն իր գրականության (եւ ոչ միայն) շուրջ: Մի օր՝ նորից այդ գրքին անդրադառնալիս, հիշեցինք բազմիցս կարդացած իմ սիրելի «Անանուն Լմբատեցի» էսսեն, որ նույնպես իր սիրելին է: Այն ոչ միայն գեղարվեստական, այլեւ գեղանկարչական գլուխգործոց է՝ գունային շքեղ վրձնահարվածներով: Տպավորիչ է Սուրենյանի բանաստեղծական եւ նկարչական լեզուն, երբ պատկերում է «Մշակույթի այդ սրբավայրը[2]»՝ բլրի բարձունքին թառած մենավոր եկեղեցին. *«Ոչ միայն գեղեցիկ, այլեւ վեհ է Լմբատը՝ այս լուռ ու լուսավոր ամայության մեջ՝ իր արտակարգորեն զուսպ ու պարզ ձեւերի կատարելությամբ: Ձեռակերտ մի ներդաշնակություն՝ ասես ամբողջ այս նախնական բնանկարի կիզակետը դարձած: Ու նաեւ թախծոտ ու հպարտ՝ իր մենությամբ: Հեռավոր դարերի համբերատար վկան»:* Էսսեն հմայում, ցնցում է Լմբատի եզակի ու սքանչելի որմնանկարների՝ բոցերի վրա կանգնած աջ ու ձախ կողմերում զույգ քերովբեների աչքերի պատկերով, որն ըստ Սուրենյանի՝ *«Եզեկիել մարգարեի նշանավոր տեսիլքն է՝ Անանուն Լմբատեցու ձեռքով մարմին առած: Աքսորյալ, տառապյալ, ահեղաձայն մարգարեն, խոսելով Աստծո անունից,*



*մահ ու կործանում է սպառնում իշխաններին, կեղծիքներին ու խաբեբաներին, անարդարներին, նախազգուշացնում է, որ ամեն մարդ անձնապես պատասխանատու է ապագայի համար, եւ յուրաքանչյուրը «պիտի դատվի իր գործերով». պահանջում է հարգել օրենքը եւ աշխատել, հուսալ ու խոստանում է ազատություն, վերադարձ դեպի լույսը**[3]**»:* Իսկ Անանուն Լմբատեցին ասես շարունակում է «ահեղաձայն» մարգարեի խոսքը, նախազգուշացնում, հուսադրում է. *«Աչալո՛ւրջ եղեք, մի՛ հանձնվեք խավարի վտանգներին, զի առավոտյան ծագելու է արեգակն արդար*[4]»: Լմբատն ասես կանչում է քեզ՝ գնալու եւ տեսնելու 7-րդ դարում կերտված եւ դաժան ժամանակների ասպատակություններից փրկված որմնանկարների՝ տեղ-տեղ վնասված կարմրասրճագույնի ու ոսկեգույնի, մուգ ու բաց կանաչի եւ կարմիրի հրավառությունը, որը, ինչպես Սուրենյանն է գրում, «հրեղեն տպավորություն» թողնող «գեղանկարչական սքանչելիք է»: Անհայտ նկարիչը, որին Կարպիս Սուրենյանն իր մտքում տվել է Անանուն Լմբատեցի անունը, աստվածային ներշնչանքով արարել է մի հրաշք գունանկար, որի առջեւ սեպտեմբերյան պայծառ մի շաբաթ օր, հաղթահարելով «սարալանջին շերտ-շերտ երկարող նեղլիկ արտերը», հուզված կանգնել է նա. *«Ես այժմ խորունկ երկյուղածությամբ խոնարհվում եմ հայ եւ համաշխարհային մշակույթի այդ եզակի, այդ թախծոտ ու հպարտ կոթողի առաջ, որ մենավոր կանգնել է այս լերկ ու ժայռոտ բլուրների միջեւ: Ես այնտեղ Հանճարը տեսա**[5]**»:*

Մի օր էլ մեր զրույցը Ջոն Գոլսուորդիի «Ասք Ֆորսայթների մասին»՝ վիպաշարի (վեցհատորյակ) բանաստեղծական թարգմանության մասին էր: Այստեղ էլ գերում է Սուրենյանի գունագեղ, հյութեղ ու շքեղ լեզուն. այստեղ էլ թարգմանչի գեղարվեստական խոսքի հրավառությունն է, եւ ի՜նչ վարպետությամբ է նրա գրիչը հմայում ու տանում՝ ի ցույց դնելով ոսկեղենիկ հայերենի ողջ գեղեցկությունն ու հմայքը: Փայլուն տիրապետելով անգլերենին՝ նույնքան փայլուն հայերենի է վերածել այդ հսկայածավալ ասքը, որ թվում է, թե...գրված է ***հայերեն***: Ըստ Կարպիս Սուրենյանի՝ հենց դրանում է թարգմանված երկի հաջողության գաղտնիքը: Այդ միտքը հաճախ եմ լսել իրենից[6]:

Եվ նույնքան գերող է Կարպիս Սուրենյանի գրիչը, երբ մեկ շնչով ընթերցում ես «Ջոն Գոլսուորդին եւ Ֆորսայթները» էսսեն, որ գրել է 1979 թվականի հուլիսին: Վիպաշարն ընթերցելիս շատ հետաքրքրական է իմանալ՝ ո՞վ է Գոլսուորդի գրողը: Վարպետ գրչով, երբ կարծես նույնանում են ասքի հեղինակն ու թարգմանիչը, Սուրենյանը, ներկայացնելով վիպաշարի հերոսներին, ինչպես նաեւ անդրադառնալով գրողի կյանքի պատմությանն ու ստեղծագործություններին, գրում է. «...Հատկապես հետաքրքրական է այն փաստը, թե Գոլսուորդին, պրուսական ռազմամոլության նկատմամբ իր վերաբերմունքն արտահայտելով ու պնդելով, որ մինչեւ վերջ պետք է պայքարել կայզերական Գերմանիայի պարտության համար, 1915 թվականի դեկտեմբերին ասում է մի նամակում. *«Եթե որեւէ մեկը դեռ տարակուսում է, որ իսկական ցինիզմով է տոգորված գերմանական հայեցակետը, թող հաշվի առնի, թե ինչպես նրանք անտարբեր կանգնեցին ու դիտեցին մոտ մեկ միլիոն հայերի կոտորածը: Դա իմ բոլոր տարակույսներին վերջ տվեց: Բողոքի ոչ մի խոսք չասացին նրանք, մատը մատին չխփեցին»: Ուշագրավ է թվականը՝ 1915 դեկտեմբեր. համաշխարհային պատերազմի երկրորդ տարին է, այդ նույն տարվա գարնանն է սկսվել մեծ ոճիրը Գերմանիայի դաշնակից Թուրքիայում, եւ անգլիացի գրողը խոսում է արդեն մեկ միլիոն հայերի կոտորածի մասին...Իսկ 1919-ին, երբ նա շրջագայում էր ԱՄՆ-ում, իր դասախոսությունների ամբողջ հոնորարը՝ 4000 դոլար, նվիրում է տարագիր հայերին ու սիրիացիներին օգնող ֆոնդին**[7]**»:*

Չափազանց հետաքրքրական էր նաեւ «Իմ Կարամազով եղբայրները» էսսեն եւ ռուս մեծ գրող Ֆեոդոր Դոստոեւսկուն նվիրված «Դոստոեւսկու մեծ հոգսը եւ մեծ նորարարությունը» գլուխը: 1943 թ. Կիպրոսի Մելքոնյան վարժարանի սանն ընկերոջը երդվում է հայերեն թարգմանել ռուս գրողի գլուխգործոցը, որի անգլերեն ընթերցումը վճռական ազդեցություն էր ունեցել նրա վրա: Դոստոեւսկուն թարգմանելու համար տաղանդավոր գրող-թարգմանիչը շրջել է Սանկտ Պետերբուրգում՝ գտնելու եւ ի մոտո տեսնելու «Կարամազով եղբայրներ»-ի աշխարհը...

Կարպիս Սուրենյանի՝ Դոստոեւսկուն եւ Գոլսուորդիին նվիրված էսսեները իսկական դաս են նրանց համար, ովքեր ցանկանում են իրապես զբաղվել գեղարվեստական երկերի թարգմանությամբ:

Մի օր մեզ համար նա կարդաց «Գարուն» ամսագրին տանելիք իր սիրելի Գյուստավ Ֆլոբերի մի նամակի առիթով գրած իր հոդվածը եւ ավելացրեց, որ Աստծո ամեն առավոտ՝ գրասեղանի առջեւ նստելիս, գրականության մասին Ֆլոբերի՝ վերը նշված խոսքն է իրեն օգնում աշխատել ու անվերջ աշխատել:

Մի օր էլ հարցրեց, թե Հրանտ Մաթեւոսյանն արդյոք լա՞վ է զգում իրեն միությունում: Ասացի, որ շատ բարձր է գնահատում իր գրականությունը: Առիթներ եղել են լսելու:

- Գիտեմ,- ժպտաց: - Մի անգամ Հրանտն ասաց՝ Կարպիսը ոչնչից կարող է գործ ստեղծել, - եւ շարունակեց, - գիտե՞ս, իսկական գրողը հենց նա է, ով ոչնչից է բան ստեղծում, - եւ նորից դառնալով իր սիրելի Ֆլոբերին՝ ասաց.

- Լա՛վ իմացիր, իսկական երջանկությունը, որդիս, այն է, որ զբաղված ես քո սիրելի գործով: Պետք է սիրես, նվիրվես մի բանի, որ մոռանաս կյանքի տհաճությունները... Մարդու համար դա է ամենակարեւորը:

Հիմա օրերս լցված են իրեն ընթերցելով, նորից եմ թերթում էսսեները, «Արեւորդիները», վերջերս ինձ նվիրած շատ սիրելի «Հին պատմություն»-ը, բայց մի առանձնահատուկ վայելք է «Անանուն Լմբատեցին». երազում եմ այն օրվա մասին, երբ երկյուղած կկանգնեմ Անանուն Լմբատեցու կերտած Հրաշքի առջեւ...

**28 սեպտեմբերի, հինգշաբթի, 2000 թ.**

Վաղուց չենք տեսել Հրանտ Մաթեւոսյանին. վատառողջ է, միություն չի գալիս: Այսօր Կարպիս Սուրենյանին նվիրված երեկոն էր մեր մեծ դահլիճում: Տեղյակ էինք պահել, թեեւ կարծում էինք՝ չի գա: Սակայն Կարպիս Սուրենյանի համար հատուկ եկավ: Ուրախացանք:

Լեփ-լեցուն դահլիճում տեղ չկար: Հանդիսությունը սկսված էր, բայց մարդիկ շարունակում էին գալ, եւ դահլիճ ներսուդուրս անելու՝ նրանց տեղավորելու պատճառով չկարողացա ամբողջական գրառել ելույթները, միայն պատառիկներ, որ նույնպես շատ հետաքրքրական են եւ լավագույնս բնորոշում են մեծ գրողին:

Բեմում հոբելյարն էր եւ երեկոն վարող գրականագետ **Երվանդ Տեր-Խաչատրյանը**, որ փայլուն գիտի եւ արժանիորեն չափազանց բարձր է գնահատում Սուրենյան գրողին ու թարգմանչին, նրա գրական եւ թարգմանական մեծ վաստակը հայ գրականության մեջ[8], եւ առաջինը նա խոսք ասաց.

- Կարպիս Սուրենյանի գրականությունը տուրք չէր այն ռեժիմին, որի մեջ ապրեց. նա այլ չափումների մեջ էր: Նրա լռությունը լեցուն լռություն էր. էսսեների տարիներն էին ու «Բնիկ որտեղացի եք»-ի տարիները: Նա հայ ճարտարապետությունը դիտարկում է իբրեւ մեր ժողովրդի մեծագույն նվաճում: Նրա գրականության մեջ կա մեծ բարոյականություն, - ասաց Երվանդ Տեր- Խաչատրյանը:

- Փայլուն տիրապետելով անգլերենին, ֆրանսերենին, ռուսերենին, գրաբարին՝ նույնքան փայլուն թարգմանություններ է կատարում,-ասաց «Ազգ»-ի խմբագիր Հակոբ Ավետիքյանը:

⇨5

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Սինյորա Կարդինալեի
# հավերժացած ծիծաղը

*Անցած տարիներին «Ոսկե ծիրան» կինոփառատոնի շնորհիվ Հայաստան այցելեցին միջազգային մի քանի կինոաստղեր, մասնավորապես՝ դերասանուհիներ: Փույթ չէ, որ նրանց փառքը մեծ մասամբ անցյալում է, նրանք իրենց անուններն անմահացրել են համաշխարհային կինոյի պատմության մեջ... Պատանեկության տարիներից կինոէկրաններից մեզ ծանոթ այդ դեմքերը, որոնց սիրում-երկրպագում էինք, որոնց լուսանկարները ձեռքից ձեռք էին անցնում, թվում էին անմատչելի, երազային աշխարհներին պատկանող լեգենդներ... Եվ տարիներ անց նրանք ահա՜ մեր քաղաքում են, մամլո ասուլիս են տալիս, կարող ենք նրանց մոտենալ, մի քանի բառ փոխանակել...*

2010 թվականի հունիսի 12-ին բախտ ունեցա մի փոքր հարցազրույց վարել Երեւան ժամանած այդ աստղերից ամենանշանավորի՝ անցած սեպտեմբերի 23-ին հավերժության ուղին բռնած ***Կլաուդիա Կարդինալեի*** *հետ...*

Միջազգային կինոգործընկերներիցս լսել էի, որ էկրանի այդ շլացուցիչ աստղը կյանքում չափազանց դյուրահաղորդ է, անմիջական, առանց աստղային հովերի, որ անգամ օդակայանում իրեն դիմավորողներին թույլ չի տալիս տանել իր ճամպրուկը:

«Գոլդեն թյուլիփ» հյուրանոցում ենք, գիտենք, որ ուր որ է՝ կհայտնվի Կլաուդիա Կարդինալեն, իմ ամենասիրելի բեմադրիչների՝ Ֆելինիի եւ Վիսկոնտիի ֆիլմերի աստղը...

-Ահա՜ եւ ծյոծ Կլավան,- ասաց փառատոնի աշխատակից, մշտապես սրամտող ***Արայիկ Խանջյանը*** *(ավա՜ղ, այս տարի նա էլ ընդմիշտ հեռացավ մեզնից):*

Կարդինալեն արդեն նստած էր հյուրանոցի ձմեռային այգու բազմոցներից մեկին: Տեսնելով իրեն մոտեցողներին՝ հանեց հովհարը, ձեռքի նրբագեղ շարժումով չխկոցով բացեց ու սկսեց իրեն հով անել, մինչ լուսանկարիչները շտապեցին հավերժացնել այդ պահը...

Նրբագեղ մի տիկին, 72 տարեկան, որը թեեւ չի հիշեցնում «Ռոկկոն և իր եղբայրները», «Ութ եւ կես», «Կարտուշ», «Ընձառյուծը», անգամ «Մայրիկ» ֆիլմերի իր հերոսուհիներին, սակայն հասկանում ես, որ գտնվում ես առօրյայում չհանդիպող, եզակի հմայքի տեր մի անձնավորության առջեւ... Ինձ հատկապես տպավորեց մազերը մուգ ներկած, արեւային ակնոց կրող Կարդինալեի անսովոր թավ ձայնը եւ հաճախակի ծիծաղը:



Նույն օրն ինձ եւ գործընկերներիս՝ ***Արտավազդ Եղիազարյանին*** ու ***Դավիթ Վարդազարյանին*** հնարավորություն տրվեց «Գոլդեն թյուլիփ» հյուրանոցի ռեստորանում համառոտ հարցազրույցներ վարել Կլաուդիա Կարդինալեի հետ: Խոսում էինք անգլերեն: Ես երրորդն էի: Նման մոտեցումը ճիշտ էր՝ հարցերի կրկնություններից խուսափելու համար:

Այդ հարցազրույցը հրատարակվեց հաջորդ օրը, «Ոսկե ծիրան օրաթերթում», որը մեջբերում եմ ստորեւ՝ թեթեւակի հղումներով.

**-Սինյո՛րա Կարդինալե, արդեն համտեսե՞լ եք հայկական ծիրանը:**

-(*Քրքջում է*) Իմ սենյակում լի՜քը, լի՜քը ծիրան կա, բայց դեռ ժամանակ չեղավ փորձելու: Բայց, իհարկե, համտեսելու եմ:

**-Իհա՛րկե: Այսպե՛ս: Ծագումն արվեստագետի համար շատ կարեւոր է: Դուք ծնունդով Թունիսից եք: Կարծո՞ւմ եք, որ դա ազդեցություն ունեցել է արվեստագետի ձեր նկարագրի, այն ամենի վրա, ինչ դուք արել եք էկրանին:**

-Հը՛մ, չգիտեմ: Երբ երիտասարդ էի, կարծես տղա լինեի, քանի որ միշտ ուզում էի ապացուցել, որ կանայք ավելի ուժեղ են: Դա սարսափելի էր: Եվ ես շատ չէի խոսում, այս ձայնիս պատճառը դա է: Ես միշտ կռվում էի տղաների հետ (*ծիծաղում է*):

**- Կարո՞ղ ենք ասել, որ ձեր խառնվածքն արեւելյան է, չասելու համար՝ աֆրիկյան:**

- Հը՛մ, կարծում եմ, որ այն շատ խառնուրդներ ունի՝ Արեւելք-Արեւմուտք: Իրականում ես շատ եմ սիրում Արեւելքը, Աֆրիկան, քանի որ ծնվել եմ այնտեղ: Բայց սիրում եմ ճամփորդել եւ հանդիպել մարդկանց: Կարծում եմ, որ սա շատ կարեւոր է՝ լինել մի միասնականություն:

**-1960-ականներին դուք եվրոպական կինոյի խորհրդանիշներից էիք: Ձեր կարծիքով այժմ եվրոպական կինոաշխարհում կա՞ն նման խորհրդանիշներ:**

-Չգիտե՛մ: Ե՛ս չպետք է դա ասեմ, այլ դո՛ւք (*ծիծաղում է*):

**-Նման կին խորհրդանիշներ այլեւս չկան...**

-Ահ, մի՞թե: Գիտեք, առաջ կինոն երազ էր, ֆանտաստիկա էր: Ֆանտաստիկ ռեժիսորներ կային: Մենք բախտավոր էինք՝ սկսելով 1960-ականներին: «Բիթլզի» հետ միասին (*ծիծաղում է*):

**-Ի՞նչ եք կարծում էկրանին կնոջ իմիջի փոփոխության վերաբերյալ: Կանայք էկրանին շատ տարբեր էին նախկինում:**

-Կինն առաջ կինոյում շատ կարեւոր էր: Հիմա կինը հատուկ էֆեկտ է...

**-Այլեւս պաշտամունքային չէ, ինչպիսին դուք էիք...**

-Ոչ միայն ես, շատ ուրիշ դերասանուհիներ կային՝ Բրիժիտ Բարդոն, Աննա Մանյանին... Հիմա կինոյում կանայք փոքր տեղ են զբաղեցնում:

**-Շատ հայուհիներ խնդրեցին հարցնել ձեզ, թե ինչպես եք դուք պահում ձեր հմայքը: Ո՞րն է մշտապես գեղեցիկ լինելու ձեր գաղտնիքը:**

-Ես միշտ ժպտում եմ: Եվ երբեք մաշկս չեմ ձգել: Չեմ սիրում: Եվ միգուցե որովհետեւ ես միշտ զբաղված եմ, միշտ աշխատում եմ...

**-Մի կին կինոքննադատ ինձ ասաց՝ խնդրեմ Կլաուդիային հարցրու...**

-Ի՞նչ....

**-Նա ֆրանսիակա՞ն, թե՞ իտալական կոսմետիկա է օգտագործում...**

-Աստվա՛ծ իմ: Ո՛չ: Շվեյցարակա՛ն (*երկար ծիծաղում է*): Ներեցե՛ք: Կնոջ համար կարեւոր է դիմահարդարումը, բայց եթե բոլոր կանայք մաշկ ձգեին՝ նույնը կլինեին: Բոլորը՝ մեծ բերաններով (*շուրթերն ուռեցնում է եւ ծիծաղում*):

**-Ինչպե՞ս եք հիշում ձեր հայկականության դասերը, որ Անրի Վեռնոյը տվեց ձեզ:**

-Ֆանտա՛ստիկ էր: Անրի Վեռնոյը հրաշալի էր: Ինձ համար անհավատալի էր մայր խաղալ եւ մաս կազմել նրա պատմությանը: Մենք սկսեցինք Մարսելում, եւ ես շրջապատված էի հիանալի դերասաններով:

**-Գիտե՞ք, որ Վեռնոյի ֆիլմից հետո հայերը ձեզ կոչում են «ամենայն հայոց մայրիկը»:**

-Իսկ գիտե՞ք, երբ ես քայլում եմ, ասենք, Փարիզում, հայերը մոտենում են, համբուրում են ինձ եւ շնորհակալություն են հայտնում:

**-Կարո՞ղ եմ ես էլ ձեզ շնորհակալություն հայտնել եւ համբուրել:**

-(*Ծիծաղում է*) Իհա՛րկե:

Ես համբուրում եմ Կլաուդիա Կարդինալեին: Ափսոս, որ այդ պահը չլուսանկարվեց: Եվ առհասարակ, ի՜նչ ափսոս, որ ամբողջ մեր այդ զրույցը չնկարահանվեց: Բայց շնորհակալ եմ Արտավազդ Եղիազարյանին, որը մեր զրույցի ընթացքում հասցրեց երկու անգամ լուսանկարել մեզ:

Այս զրույցից բացի Կլաուդիա Կարդինալեին հայտնեցի, որ մենք հեռավոր խնամիական կապ ունենք, քանի որ իմքը եւ ֆրանսիացի քեռայրիս իտալացի ազգականները միեւնույն գերդաստանից են: Նա, ինչ խոսք, զարմացավ, որը դարձյալ արտահայտվեց թավաձայն ծիծաղով: Անշուշտ, անսովոր պիտի լիներ Հայաստանի պես երկրում հանդիպել մեկի, որի հետ ունես հեռավոր խնամիական կապ... Խնդրեցի սինյորա Կարդինալեին ստորագրել իմ «Հայերը համաշխարհային կինոյում» գրքում տեղ գտած Անրի Վեռնոյի եւ իր լուսանկարի տակ... Դերասանուհին ստորագրեց եւ վերադառնալով քիչ առաջ լսածին՝ հետաքրքրվեց, թե քեռայրիս ո՞ր կողմի ազգականների մասին էր խոսքը...

Եվ մեր զրույցի վերջում Կլաուդիա Կարդինալեին նվիրեցի կնոջս պատրաստած կավե մեդալիոնը՝ նռան պատկերով, որը նա անմիջապես կախեց պարանոցից: Շատ հուսով եմ, որ ամենայն հայոց «մայրիկը» պարբերաբար իր սրտի վրա կրեց Հայաստանի այդ մի կտորը...

***Հ. Գ.*** *- Հարցազրույցից հետո շտապում էի «Ոսկե ծիրանի» գրասենյակ՝ հաջորդ օրվա թերթի համար գրի առնելու ձայնագրությունը: Դեռ չէի հավատում, որ րոպեներ առաջ զրուցեցի մանկուց սիրելի Կլաուդիա Կարդինալեի հետ, դեռ մի հատ էլ՝ պաչիկ արեցի: Եվ հանկարծ... հազիվ պրծա աղետից: Հուլիսյան այդ կիրակին Վարդավառի անվան ներքո հանդես եկող հայաստանյան խուլիգանության օրն էր: Աբովյան փողոցի վրա քառասունին մոտ մի տղամարդ վազելով մոտեցավ ու դույլով ջուրը շփեց վրաս՝ ամբողջովին թրջելով պայուսակս, որի մեջ ձայնագրիչ սարքն էր... Րոպեներ անց սարքը ստուգելով՝ թեթեւացած շունչ քաշեցի: Ձայնագրությունը, բարեբախտաբար, չէր փչացել, եւ ինձ հիշատակ մնաց հավերժ հմայիչ Կլաուդիա Կարդինալեի՝ միլիոնավոր հանդիսականների սրտի հետ խոսած կենդանի ու անսովոր թավ ձայնը...*

⇨4 Բեմ բարձրացավ Հրանտ Մաթեւոսյանը:

# «Կարպիսն ինձ օժտել է ...»

- Իմ շնորհակալությունը Կարպիսին՝ մեր բոլոր հանդիպումների համար՝ թե՛ էսսեների, թե՛ թարգմանությունների: Կարպիսն ինձ օժտել է աշխարհին սիրով նայելու հայացքով: Առաջինը Սարոյանի մասին իր սքանչելի էսսեն. Սարոյանը հառնեց իր սքանչելի[9] կերպարով, Ալան Հովհաննեսով: Շնորհակալություն իր թարգմանությունների եւ մարդկային պատմվածքների համար: Երբ նա միջնորդ է եղել իմ եւ իր՝ երկու իրականությունների միջեւ, ավելի եմ սիրել իրեն: Շնորհակալության խոսք Մելգոնյան հաստատությանը, որ այս հայաստանյան մշակույթ բերեց Կարպիսին, Հակոբ Հակոբյանին: Շնորհակալ եմ Կարպիսին, որ նաեւ ի՛ր միջոցով սիրեցի Հայաստանը... Շնորհակալ եմ...- եւ մոտենալով Կարպիս Սուրենյանին՝ նվիրեց 1997 թվականին Վենետիկում տպագրված Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհին» եւ իջավ, նստեց դահլիճում:

- Երբ լինում ենք տաճարներում, Կարպիսի ձայնը միանում է տաճարի քարերին, փայլուն ներդաշնակություն է լինում,- **Շահեն Խաչատրյանն** էր:

Կարպիս Սուրենյանը երկար տարիներ երգել է **Արամ Հովհաննիսյանի** գլխավորած Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբում:

Վերջում խոսքը հոբելյարինն էր.

- Ստեղծագործողի համար շատ կարեւոր է, որ իր խոսքը երկխոսության մեջ լինի ընթերցողի հետ եւ արձագանք ստանա: Ողջ կյանքս անցնում էր: Կյանքը կարճ չէ, եթե ապրում ես կյանքը... Բայց թող երկար չլինի, ամեն ինչ իր չափի մեջ լինի: Մարդու կյանքում ճակատագրական շրջադարձը շատ կարեւոր է: Մի անգամ Սիսիանի եկեղեցում երգեցի, մի գյուղացի, որ այնտեղ էր, ասաց. «Կարծես եկեղեցու պատերն էլ զարմացան»: Ստեղծագործելու իմ ձեւը սոկրատյան ձեւն է՝ երջանկությունն այն է, որ քո սիրած գործն ես անում եւ օրերով, ամիսներով մոռանում ես ամեն ինչ: Երջանկությունը սիրած բանին տեր լինելն է, մանավանդ եթե ստեղծագործում ես: Ինձ լուսանցքում պահելով՝ ես տարիներով իմ սիրած գործն արեցի՝ հակառակ տանջանքների: Երբ նստած էի իմ գրասեղանի առաջ, ես երջանիկ էի: Իմ արածը ծառի ստվերի տակ խորհրդածելն էր: «Ավելի լավ է մի մեծ մոմ վառել, քան շարունակ անիծել խավարը»,- ասում է Կոնֆուցիոսը: Եթե սրտիդ մոմը վառես, խավարը չես անիծի: Եթե մոմիդ բոցը վառ է, խավարից վախ չկա...

Լսում եւ արագ-արագ գրառում էի ու, չգիտես ինչու, մտածում, որ Կարպիս Սուրենյանի խոսքը ասես ինձ էր ուղղված, ասես մեր հերթական զրույցներից մեկն էր...

*[1] 1996-2001 թթ. Հրանտ Մաթեւոսյանը Հայաստանի գրողների միության նախագահն էր:*

*[2] Կարպիս Սուրենյան, «Ոգու ամրոցներ», «Սովետական գրող», 1982, էջ 326:*

*[3] Նույն տեղում, էջ 327:*

*[4] Կարպիս Սուրենյան , «Ոգու ամրոցներ», Եր., «Սովետական գրող», 1982, էջ 327:*

*[5] Նույն տեղում, էջ 330:*

*[6] Տարիներ անց, երբ սկսեցի զբաղվել թարգմանությամբ, Կարպիս Սուրենյանի այդ միտքն ինձ շատ է օգնել: Դա կյանքիս կարեւոր դասերից մեկն էր:*

*[7] Կարպիս Սուրենյան, «Ոգու ամրոցներ», Եր., «Սովետական գրող», 1982, էջ 260:*

*[8]1995 թ. հոկտեմբերի 17-ին մեծ գրողի ծննդյան 70-ամյակին նվիրված երեկոն (նորից մեր մեծ դահլիճում) նույնպես վարում էր Երվանդ Տեր-Խաչատրյանը:*

*[9] «Սքանչելի» բառը կրկնեց երկու անգամ:*

ՄԵԹՅՈՒ ՀՈԱՐԵ
«The New Arab» կայքի լրագրող, Լոնդոն

# Թուրքիան զինվում է եւ զինում՝ աշխարհը

## *Պաշտպանական դիվանագիտություն*

Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության արագ էվոլյուցիան Անկարային դարձրել է զենք-զինամթերքի գլոբալ առեւտրի գլխավոր դերակատար, նոր կշիռ հաղորդելով նրա արտաքին քաղաքականությանը: Թուրքիայի նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանի** Սաուդյան Արաբիա կատարած այցը 2022-ին բոլորովին էլ սովորական դիվանագիտական իրադարձություն չէր: Այն տեղի էր ունենում չորս տարի անց սաուդյան հայտնի այլախոհ **Ջամալ Խաշոգգիի** սպանությունից, ինչը պաշտոնական ամենացածր աստիճանի էր հասցրել երկու երկրների հարաբերությունները: Էրդողանի հայտնությունը սաուդյան մայրաքաղաքում նպատակ ուներ կոտրել սառույցը թագաժառանգ **Մոհամմեդ Բին Սալմանի** եւ իր միջեւ ստեղծված հարաբերությունների եւ վերականգնել կապերը թագավորության հետ: Ներկայիս, երեք տարի անց եւ պետական մի շարք այցելություններից հետո, երկկողմ պաշտպանական կապերը նշանակալիորեն աճել են: Ռիադը 2023-ին թուրքական ԱԹՍ-եր գնելու մեծաքանակ պատվեր տվեց, իսկ այժմ, ըստ լուրերի, պատրաստվում է միլիարդավոր դոլարների արժողությամբ զենքեր ձեռք բերելու նոր գործարք կնքել: Միաժամանակ թուրքական ձեռնարկություններին հրավիրում է օգնել կառուցելու իր սեփական պաշտպանական արդյունաբերությունը եւ պայմանագրեր կնքել համատեղ արտադրությամբ արդիականացնելու երկրին անհրաժեշտ ռազմական տեխնիկան:

Նման գործընկերություն հազիվ թե հնարավոր լիներ պատկերացնել մի քանի տարի առաջ: Խորհրդանշական է նաեւ արձանագրել զենքի միջազգային վաճառքի ոլորտում թուրքական արդյունաբերության ներկայությունը, որի մասշտաբները օրեցօր ավելանում են:

### Արտադրված է Թուրքիայում

Վերջին հինգ տասնամյակների ընթացքում Թուրքիայի իրարահաջորդ կառավարությունները ամեն ջանք գործադրել են ընդլայնելու երկրի պաշտպանական արդյունաբերությունը, որպեսզի կրճատեն կախվածությունը օտար երկրների ընկերություններից զենք գնելու անհրաժեշտությունը: Ուղիներ են գտնվել ստեղծելու մի էկոհամակարգ, որպեսզի զենքի բաղադրամասեր արտադրող տեղական ձեռնարկությունները ընդլայնեն իրենց գործունեությունը եւ աշխարհի առաջատար կապալառուների հետ համագործակցելով ձեռք բերեն անհրաժեշտ գիտելիքներ նոր տեխնոլոգիաների վերաբերյալ: Ներկա դրությամբ զենքի արտադրման տեղական ձեռնարկությունները կարողանում են 80 տոկոսով բավարարել երկրի պաշտպանական պահանջները: Այդ ասպարեզում ինքնավարություն ձեռք բերելու այս մղումը պայմանավորված էր 1970-ական թվականներին Թուրքիային ամերիկյան զենք մատակարարելու արգելակումով: «Մ. Նահանգների եւ արեւմտյան այլ երկրների հետ հարաբերությունների լարվածությունը եւ պարտադրված սահմանափակումները ստիպեցին, որ երկիրը կենտրոնանա իր սեփական պաշտպանական ոլորտի զարգացման վրա», «The New Arab» կայքին տեղեկացրել է միջազգային հարաբերությունների փորձագետ, պրոֆ. **Ուֆուկ Նեջատ Թաշճին**:

Յոթանասականների դասերը վերահմաստավորվեցին ընդամենը հինգ տարի առաջ, երբ Թրամփի վարչակազմը դարձյալ սահմանափակումներ մտցրեց զենքի մատակարարման ոլորտում եւ ի պատասխան ռուսական S-400 պաշտպանական համակարգեր ձեռք բերելու Թուրքիայի որոշման՝ դուրս հանեց նրան F-35-ի ծրագրից: Այդ օրերից սկսած ամերիկյան զենքերի վաճառքը Թուրքիային նվազել է ավելի քան 80 տոկոսով, ըստ Թաշճիի:



Վերջին տարիներին այդ ոլորտի ձեռքբերումները լավ արդյունք են տվել: Թուրքական արտադրության ԱԹՍ-երը եւ զրահամեքենաները իրենց տեխնոլոգիական բարձր որակով խիստ եկամտաբեր են դարձել: Թուրքական նավատորմը օգտագործում է տեղական ծովային ԱԹՍ-երը եւ ներկայիս կառուցում է երկրի առաջին ավիակիրը: Երկրի ամենամեծ պաշտպանական ընկերությունը՝ Ասելսանը արտադրում է սենսորներ, հրթիռաուղղորդիչներ եւ էլեկտրոնային համակարգեր: Օգոստոսին բանակը սկսեց օգտագործել նաեւ ընկերության նոր «Steel Dome» կոչված օդային պաշտպանության համակարգը, որն ասում են կարող է պաշտպանել երկիրը ինչպես կարճ եւ միջին, այնպես էլ հեռահար հրթիռների հարձակումներից: Պաշտպանական արդյունաբերության ամենահամարձակ նախաձեռնություններից է հինգերորդ սերնդի KAAN մակնիշով կործանիչների արտադրությունը, որն այժմ ընթացքի մեջ է: Մինչեւ ներկա տասնամյակի ավարտը այս ծրագրի իրականացումը Թուրքիային դարձնելու է այն հազվագյուտ երկրներից մեկը, որոնք կարող են արտադրել նման առաջնակարգ ինքնաթիռներ:



### Զինամթերքի գլոբալ մատակարարող

Պաշտպանության բնագավառում Թուրքիայի ներդրումների անընդհատ աճը նրան դասել է զենք-զինամթերքի արտահանությամբ զբաղվող աշխարհում ամենաարագ զարգացող պետությունների շարքում: Նրա արտադրանքի պահանջարկը ձգվում է աֆրիկյանից մինչեւ ասիական երկրները: ԱԹՍ-երի եւ զրահամեքենաների վաճառքի տարեկան եկամուտները ավելի քան եռապատկվել են ներկա տասնամյակի ընթացքում, 2024-ին հասնելով 7.1 միլիարդ դոլարի: Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտական ինստիտուտի տվյալներով 2010-ական թվականների երկրորդ կեսի 0.8 տոկոսի փոխարեն գլոբալ շուկայական շահաբաժինը 1.7 տոկոսով ավելացել է: 2020-24 թվերին թուրքական զենքի պահանջարկը հատկապես մեծ է եղել բարձր եւ միջին զարգացում ունեցող երկրների կողմից, ինչպիսիք են Ադրբեջանը, Թուրքմենստանը, Ծոցի երկրները, Ուկրաինան եւ Պակիստանը: Բացի հարմար գնից, թուրքական ընկերությունները արեւմտյան չափանիշներին համապատասխան բարձրորակ զինամթերք են մատակարարում շնորհիվ այն բանի, որ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ պետություն է: «Թուրքական ընկերությունները կարճ ժամկետներում եւ պայմանագրային առավել ճկուն սկզբունքներով կարողանում են պահանջարկը բավարարել», ավելացնում է Իզմիրի տնտեսագիտության համալսարանի միջազգային հարաբերությունների պրոֆ. **Սիտքի Էջելին**: Թուրքական զինամթերքը նաեւ նվազ քաղաքական կախվածություն ունի համեմատած արեւմտյան պետությունների հարափոփոխ առաջնահերթությունների հետ: Արտադրանքը մարտադաշտում մշտական գործածության մեջ է թուրքական բանակի զորավարժությունների ժամանակ, ինչը հնարավորություն է տալիս անընդհատ կատարելագործել այն: Չնայած այդ ընկերությունները աշխատում են տնտեսական բավական անկայուն եւ անկանխատեսելի մթնոլորտում, նրանք վերջին տարիներին բացի զարգացող երկրներից սկսել են նոր շուկաներ նվաճել Եվրոպայում: Իսպանիան, Պորտուգալիան, Իտալիան եւ այլ պետություններ հետաքրքրություն են ցուցաբերում: Վաճառքը շարունակվելու է աճել, եւ կառավարությունը ակնկալում է, որ եկամուտները այս տարի կհասնեն 8 միլիարդ դոլարի սահմանը, իսկ 2028-ին կհասնեն 11 միլիարդի:

Զինամթերքի գլոբալ արդյունաբերության ոլորտում ԱԹՍ-երը դարձել են Թուրքիայի կարեւորագույն ապրանքանիշը: «Baykar» եւ «Turkish Aerospace Industries» (TAI) ընկերությունները ԱԹՍ-եր են վաճառել աշխարհի մոտ 40 երկրների, ընդլայնելով իրենց ներգրավվածությունը Ուկրաինայի, Լեռնային Ղարաբաղի եւ Սիրիայի վիճելի հակամարտություններին: Արտադրող երկիրը նման պայմաններում դարձել է առաջատար տեխնոլոգիաներին տիրապետող մի պետություն, որը կարողանում է թելադրել իր կանոնները: Աճը շատ արագ է ստացվել: Զինավաճառքի միջազգային շուկա մտնելուց 7 տարուց էլ պակաս ժամկետում թուրք կապալառուները արդեն «դրոնների» գլոբալ փոխադրման կամ արտահանման երկու երրորդի պատասխանատուն են դարձել, ըստ «Center for New American Security» անվտանգության կենտրոնի տվյալների: 2020-ի հունվարից մինչեւ 2023-ի սեպտեմբերը քանակական առումով Ամերիկայից հետո Թուրքիան երկրորդ պետությունն է (չհաշված Իսրայելը), որ ԱԹՍ-եր է արտահանում աշխարհի տարբեր երկրներ: «Bayraktar TB2» եւ «TAI-ի Akinci» տիպի ԱԹՍ-երի հաջողությունները արդյունք են անօդաչու օբյեկտներ գործարկելու տասնամյակների ռազմավարության, որն սկիզբ էր առել PKK-ի հետ Թուրքիայի ունեցած հակամարտության պայմաններում: Էջելիի խոսքերով՝ դա մեծ փորձառություն էր այդ սարքերի դոկտրինայի, օգտագործման վերաբերյալ անմիջական գիտելիքներ ձեռք բերելու եւ իմանալու դրանց ուժեղ եւ թույլ կողմերը:

Անշուշտ, Թուրքիան իր այս հաջողությունների համար մեծապես պարտական է ամերիկյան եւ եվրոպական ընկերությունների հետ համագործակցությանը: Շատ քիչ երկրներ են կարողացել ամերիկյան արտադրության մարտական «դրոններ» ձեռք բերել, որովհետեւ Մ. Նահանգների օրենսդրությունը սահմանափակում է դրանց արտահանումը: Իսկ եվրոպական երկրների ընկերությունները շատ երկար են պայքարել ԱԹՍ-երի իրենց ծրագրերը իրականություն դարձնելու համար: Էջելիի տրամաբանությամբ՝ «Եվրոպացիները շուկայում բացակայում էին, Ամերիկան չէր ցանկանում վաճառել: Չինաստանը վաճառում էր, բայց գնորդները դժգոհ էին: Թուրքիան օգտվեց եւ «կապիտալի» վերածեց ընձեռված հնարավորությունը»:

Բացի նշվածներից, թուրքական TAI ընկերությունը Իսպանիային մատակարարում է ուսուցողական ինքնաթիռներ, թուրք նավաշինարարները Պորտուգալիայի նավատորմի համար լոգիստիկ նավեր են պատրաստում, իսկ Baykar ընկերությունը Իտալիայում «Լեոնարդո» պաշտպանական ընկերության հետ անօդաչու օդանավեր է ստեղծելու, որպեսզի հետագայում դրանք վաճառվեն եվրոպական երկրներին:

### Զենք եւ դիվանագիտություն

Թուրքիայի տեխնոլոգիական առաջընթացը առանձնահատուկ մեխանիզմ է՝ սերտացնելու իր հարաբերությունները նախկին հակառակորդների հետ: Դրա ամենավառ օրինակը կարող ենք տեսնել Ծոցի երկրներում, որոնք մի կողմ թողնելով Անկարայի հետ իրենց նախկին կնճռոտ հարաբերությունները, այժմ սկսել են համագործակցել թուրքական պաշտպանական ընկերությունների հետ: Արաբական Միացյալ Էմիրությունները, որն ինքնին զինամթերքի առաջատար մատակարարող է, ներկա տասնամյակի առաջին կեսին Թուրքիայի արտահանման մեծագույն շուկան է հանդիսացել: Մյուս կողմից Սաուդյան Արաբիան է սկսել առավել սերտ հարաբերություններ մշակել թուրքական ընկերությունների հետ, հատկապես Էրդողանի Ռիադ այցելությունից (2022) հետո: 2023-ին թագավորությունը դարձավ վերջին պետությունը, որ Bayraktar ԱԹՍ-երով հարստացրեց իր օդուժը: Այժմ էլ պատրաստվում է 6 միլիարդ դոլարի պայմանագիր կնքել թուրքական տանկեր, նավեր եւ հրթիռներ ձեռք բերելու համար: Հուլիսին արքայազնի հարստության հիմնադրամը թուրքական ընկերություններին վարձեց, որպեսզի երկրի պաշտպանության արդյունաբերությունը զարգացնեն եւ դրանով նվազեցնեն կախվածությունը ամերիկյան արտադրության զինամթերքից: Նաեւ ցանկություն է արտահայտել մինչեւ 100 KANN տիպի կործանիչներ գնելու եւ հետագայում դրանց համատեղ արտադրությունը ծրագրելու:

Թաշճիի խոսքերով՝ տարածաշրջանում գլխավոր դերակատար լինելու Թուրքիայի ցանկությունը ամրապնդվում է պաշտպանական արդյունաբերության միջոցով ստեղծված երկկողմ հարաբերությունների խորացումով: Այսուհետ հարեւանների համար հեշտ չի լինելու անտեսել Թուրքիային:

**«Արմինյն Միրոր-Սփեքթեյթրից»**
**Թարգմանեց ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

# Վտանգավոր անտարբերություն

⇨1

Վերադառնալով նախընտրական տրամաբանությանը, անկախ նրանից, թե ընտրությունները վրա կհասնեն այս տարեվերջին՝ արտահերթ, թե եկող տարեկեսին, ապա այդ տրամաբանությունն ամենուր էր վերջին օրերին. և՛ «Պատիվ ունեմ» խմբակցության նախաձեռնած իմպիչմենտի թեմայով լսումներին, որի ժամանակ «Հայաստան» խմբակցությունը նախաձեռնողներին նվիրեց իր պատգամավորների ստորագրությունները: Դա երեւում էր իշխող մեծամասնության հեղինակած Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության հաստատման վերաբերյալ հայտարարության քննարկումից եւ ընդունումից, որն ընդդիմությունն անվանեց Կոպենհագենում Փաշինյան-Ալիեւ հանդիպմանը զուգահեռվող Ալիեւին հաճոյանալու քայլ, աշխարհաքաղաքական արկածախնդրության, միակողմանի զիջումների, ազգային շահերը սակարկման հանելու եւ անորոշ ապագայի վերաբերյալ փաստաթուղթ ու չմասնակցեց դրա քննարկմանը:

Նախընտրական տրամաբանությունն ամենուր է՝ եւ վերջին օրերի քրեական պատմություններում, ցավոք՝զոհերով, եւ ԱԺ- կառավարություն հարցուպատասխանի ձեւաչափում, որտեղ ընդդիմությունն ու իշխանությունը շարունակում էին միմյանց անվանարկելու եւ ոչնչացնելու մաստերկլասներ ցույց տալ: Իշխանությունն օգոստոսի 8-ին նախաստորագրված հռչակագրի՝ խաղաղություն բերողի թիկնոցն է քաշել ուսերին, անգամ հպարտանալով ԵԽԽՎ բրիտանացի պատգամավորին վարչապետ Փաշինյանի այն պատասխանով, թե «Զանգեզուրի միջանցք» անվանումը լեգիտիմ խոսույթ չէ, անգամ Ադրբեջանում են սկսել քննադատել Նիկոլ Փաշինյանին՝ Արցախի վերադարձի անհնարինության եւ մի շարք այլ մեկնաբանությունների համար, իսկ ընդդիմությունը շարունակում է պնդել, որ շարունակական զիջումները խաղաղություն չեն բերելու:

Անգամ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման քննիչ հանձնաժողովի զեկույցը առաջիկայում ԱԺ փակ լսումների ձեւաչափով քննարկելու ԱԺ նախագահի որոշումն է այդ տրամաբանության մեջ, քանի որ այդ զեկույցը լիագումար նիստի օրակարգ չմտցնելու՝ ԱԺ նախագահի պատճառաբանությունը, թե խախտվել են այն ներկայացնելու ժամկետները, իրավական հիմքեր չկան լիագումար նիստում քննարկելու համար՝ ոչ մի քննության չի դիմանում. խախտողն էլ էիք դուք, չխախտողն էլ. չխախտեիք: Չնայած հանձնաժողովի նախագահ **Անդրանիկ Քոչարյանն** ինձ ասել է, թե ամեն ինչ կանոնակարգի շրջանակում է կատարվել, խախտում չկա: Հավանաբար վերեւներում լավ էլ հասկացել են, որ բազմաթիվ փաստերի ի հայտ գալը լիագումար նիստի բաց հատվածում կարող է մյուս ականատեսների հակափաստարկներին արժանանալ եւ դահլիճում, եւ նրանից դուրս, կարող է բացվել պարտության իսկական դեմքն այս անգամ հրապարակայնորեն, մինչեւ այժմ եղած անպաշտոն վկայությունների արտահոսման ֆոնին նաեւ հրապարակորեն բացելով Պանդորայի տուփը: Եւ դա բոլորովին չի տեղավորվում իշխանականների նախընտրական տրամաբանության մեջ:



Բոլորը՝ անհատները, քաղաքական ուժերը, որոնք էլի նույն ռեպերտուարի մեջ են, ինչ վերջին հինգ տարին եւ միմյանց սեւացնելով, այդ սեւացնելը տիրաժավորելով փորձում են մոտեցող ընտրություններին ավելի գերադաս դիրք, վարկանիշ ունենալ, իրենց առօրյա ընթացքի արագության մեջ լրիվ անտես են արել, որ այժմ մենք բոլորովին այլ հասարակություն ունենք,քան ասենք հինգ տարի առաջ էր, մինչդեռ հենց իրենք մնացել են տասը տարի առաջվա մեջ, դիրքավորվում են այնպես, ինչպես տասը տարի առաջ:

Լրիվ ուրիշ հանրություն ունենք այժմ: Պարտությունից հուսահատված, ինքն իր ներսը քաշված, ամենօրյա քաղաքական «հզոր» բերմադրություններից իրենց է՛լ ավելի անպաշտպան զգացող մեր հանրությունն օտարվել է ձեզանից, պարոնայք քաղաքականնե՛ր, դուք բոլորդ մնացել եք ձեր կողմնակիցներով շրջապատված ու չեք նկատում, որ ունենք այնպիսի հանրություն , որի գերակշիռ մասն անտարբեր է հիմա բոլոր ցնցող բացահայտումների, բոլոր քողազերծումների, անգամ սպանությունների հանդեպ:

Այնքան բան տեսավ մեր հանրությունը, այնքան ստեր ու ստախոսների, այնքան ազգափկիչների, որոնք եկան ու անցան՝ հուսախաբ անելով, իսկ հոգսը մնաց իրենը, չպակասեց, չփոխվեց, այլ էլ ավելի ահագնացավ, նրան դարձնելով մենակ, անտարբեր, անգամ անկարեկից՝ ցավալի դեպքերի հանդեպ:

ԱԺ-կառավարութուն վերջին հարցուպատասխանի ժամանակ ես մի տասներորդ հարցից թողեցի լրագրողական օթյակը եւ հեռարձակումն ականջիս՝ դուրս եկա շենքից՝ տուն գնալու: ԱԺ-ում դրամատիկ հարցուպատասխան էր, վարչապետի եւ ընդդիմադիր պատգամավորների միջեւ հերթական ընդհարումն էր, իսկ փողոցում, օպերային հարակից կանգառում այլ զուգահեռ կյանք էր՝ խորհրդարանում տեղի ունեցողի հետ կապ չունեցող, մարդիկ այդ բոլորից անհաղորդ էին Ոչ մեկի ձեռքում չտեսա հեռախոս, որ միացած էր ԱԺ-ում կատարվողին, մեքենաներում ԱԺ նիստի ուղիղ հեռարձակում չէին լսում, ինչպես տարիներ առաջ էին մի բան փոխելու հույսով մարդիկ միացնում եւ լսում: Մարդիկ հոգսառաս եւ անտարբեր՝շտապում էին հարկավոր փոխադրականը գտնել, իրենց երեկոն էին փորձում կազմակերպել, ու վստահ եմ, եթե բարձրացնեի հեռարձակման ձայնը, բարկացած պահանջելու էին անջատել միմյանց հասցեագրված ընդդիմության եւ իշխանության կոպտախոսությունը, հիշոցներ նետելու երկկողմանի ճարպկությունը՝ ասելով, թե բոլորն էլ նույնն են ու հոգնել են նրանցից:

Այո, մարդկանց վրա վտանգավոր անտարբերություն է իջել, եւ դրան նպաստել է ընդդիմություն-իշխանություն տարիներով բեմադրվող դիմակայությունը, արտաքին ազդեցությունների դեմ ներարկվող անպաշտպանությունը, մարդկանց կյանքը իրապես բարելավելու պետական կառույցերի անկարողությունը, վաղվա օրվա հանդեպ անվստահությունը: Անգամ երկրի անվտանգության առումով այլեւս մարդիկ չեն մտահոգում- անտարբեր են դարձել:

Անտարբեր ժողովուրդն, իհարկե, չի պահանջի Թրամփի երթուղու վերաբերյալ պայմանավորվածությունների պարզաբանում, ճակատագրական որոշումների հիմնավորում, անգամ կարող է ընտրություններին չմասնակցել: Մենք նոր, վտանգավոր անտարբերությամբ վարակված հանրություն ունենք, ու դրա մեջ մեղավոր են ընդդիմությունն ու իշխանությունը միասին:

# Իմաստաբանական բառարան

## *Հայեցակարգային մոտեցում*

Մեր իրողությունները նոր հայեցակարգի պահանջներին հարմարեցնելու համար պետք է անուններից սկսել, ավելի շուտ՝ «վտանգավոր» անուններից:

**Վրեժ** անունը, օրինակ, վտանգավոր անունների շարքից է: Դրանից մի տեսակ ռեւանշիզմի հոտ է գալիս: Պետք է դրա փոխարեն ավելի խաղաղասիրական անուն ընտրել: **Վարուժ** անունը միանգամայն կարող է Վրեժին փոխարինող տարբերակ համարվել, որովհետեւ դրանից խաղաղասիրության հոտ է գալիս: Հաստատ գիտեք, որ արու թռչունին վարուժան են ասում, եւ գիտեք, որ ագռավից ու բայղուշից բացի բոլոր թռչունները խաղաղասիրության խորհրդանիշներ են:

**Մարտիկ**ն ու **Ռազմիկ**ն էլ չեն տեղավորվում իրական Հայաստանի հայեցակարգի մեջ: Այդ երկու անուններին փոխարինող բազմաթիվ անուններ կարող եմ առաջարկել: Օրինակ՝ Մարտիկի փոխարեն՝ **Մարզիկ**, իսկ Ռազմիկի փոխարեն՝ **Վռազիկ**: Դրանց փաղաքշական տարբերակներն էլ՝ **Մռզո** եւ **Վռզո**:

**Հերոս** անունն էլ իր մեջ բռնության տարրեր է պարունակում: Շառից, փորձանքից հեռու մնալու համար եկեք դրա փոխարեն **Հարոս** անունը շրջանառության մեջ դնենք, որը նշանակում է «մշակված, բայց մեկ տարի չցանած հող»: Դրա փաղաքշական դիմելաձեւի համար կարող եմ **Հարո** տարբերակն առաջարկել:

Շատ կցանկանայի իմանալ՝ ո՞վ է եղել **Շանթ** անվան ընտրության շարժառիթը, եւ կա՞ արդյոք մեկ այլ ժողովուրդ, որ իր զավակին բնության տարերքի՝ մթնոլորտային էլեկտրալիցքաթափման անունով կոչի: Չէ՞ որ այդ անունն էլ կարող է ոմանց շանթահարել ու հետաձգել խաղաղության համաձայնագրի ստորագրման պահը: Շանթին փոխարինող ամենահարմար տարբերակը, իմ կարծիքով, կարող է շանթահարելու վտանգը չեզոքացնող **Շանթարգել** անունը լինել: Բայց դրա համար փաղաքշական տարբերակ չունեմ առաջարկելու:

**Սեւ ցուցակի** մեջ հայտնվելու ճակատագրին կարող են արժանանալ նաեւ **Մարտիրոս** անունը կրող հայորդիները, որոնք որոշ մարդկանց պատկերացմամբ՝ «հայրենասիրության վտանգավոր գաղափարից» ելնելով կարող են ծայրահեղ քայլերի դիմել: Եկեք դրա փոխարեն շրջանառենք «**պարտ**» արմատից կազմված **Պարտիրոս** տարբերակը՝ նրան վերապահելով **Պրտո** փաղաքշականը:

**Տարոն** եւ **Խորեն** անուններն էլ իրական Հայաստանի հետ կապ չունեցող տեղանուններից են կազմված: Երկուսն էլ Արեւմտյան Հայաստանից են. առաջինը գտնվում է Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի կազմում, երկրորդը՝ Բիթլիսի Մշո գավառում:

Այդ շարքից է նաեւ **Մեսրոպ** անունը, քանի որ նրա անվանակոչության աղբյուրը ծննդով տարոնացի Մաշտոցն է՝ դարձյալ Արեւմտյան Հայաստանից, ժամանակակից լեզվով ասած՝ Թուրքիայից: Այդ տեսակետից ըմբռնումով է պետք մոտենալ առաջին դասարանի այբբենարանում Մեսրոպ Մաշտոցի պատկերի եւ նրա մասին պատմող նյութի՝ մեքենայական ընթերցվող օպտիկական պիտակի՝ **QR-կոդի** տակ թաքցնելու մասին ընդունված որոշման նկատմամբ:

Բայց, ի սեր Աստծո, եկեք **Արարատին** չդիպչենք, քանի որ դիպչել դրան կնշանակի շոշափել մեր արտաքին քաղաքականության ելման կետերն ու հարացույցերը:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# «Մահվան համբույր». Ինչո՞ւ են Արեւմուտքի երկրները հիմա ճանաչում Պաղեստինը

*Վերջին մի քանի օրերին միջազգային ասպարեզում արձանագրվեց իսրայելա-պաղեստինյան ներկա հակամարտության լուծմանն օգնելուն ուղղված երկու իրարից տարբեր քաղաքական ակտ: Սեպտեմբերի 29-ին հրապարակվեց ԱՄՆ-ի նախագահի **Դոնալդ Թրամփի** «Գազայի հակամարտության դադարեցման համալիր պլանը», իսկ դրանից մեկ շաբաթ առաջ մի քանի առաջատար եւ այլ երկրներ, այդ թվում Ֆրանսիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը, Մեծ Բրիտանիան, Կանադան, Պորտուգալիան, Ավստրալիան, պաշտոնապես հայտարարեցին Պաղեստինը որպես առանձին պետություն ճանաչելու մասին:*

Մեր ընթերցողի համար կարծում ենք սկզբունքորեն հետաքրքրություն ներկայացնող այս երկրորդ թեմայով՝ ռուսաստանյան «Պրոֆիլ» գործարար հանդեսից թարգմանաբար ներկայացնում ենք «Վալդայ» հայտնի բանավիճային ակումբի ծրագրի տնօրեն, ՌԴ «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի Եվրոպական եւ միջազգային համալիր հետազոտությունների կենտրոնի (ЦКЕМИ НИУ ВШЭ) *գիտական ղեկավար ՏԻՄՈՖԵՅ ԲՈՐԴԱՉԵՎԻ սեպտեմբերի 22-ին հրապարակված վերլուծական հոդվածը:*



Արեւմուտքի մի ամբողջ շարք առաջատար եւ երկրորդական երկրների կողմից Պաղեստին պետության արագ-արագ ճանաչումը շատ վատ լուր է հենց պաղեստինցիների համար: Նախ, որովհետեւ դա ավելի կամրապնդի Իսրայելի իշխանությունների վճռականությունը՝ վերջ դնելու իրենց պատմական հակառակորդի նույնիսկ մնացորդային գոյությանը: Մինչեւ Պաղեստինը չճանաչվեր իսրայելցիների համար որոշ նշանակություն ունեցող որեւէ պետության կողմից, Թել Ավիվի կառավարությունը կարող էր առանձնապես չշտապել. թշնամին չնայած կյանքի նշաններ էր ցույց տալիս, բայց անշարժացած էր, ինչը բոլորին միանգամայն բավարարում էր: Պաղեստինի հարցը շատ կողմերով դարձել է Իսրայելի ներքին քաղաքականության մի մասը: Իսկ հիմա նրան բացահայտ ասում են. «Սպասիր, թե չէ մենք դա կօգտագործենք քո դեմ»: Ու քանի որ հրեից պետության կառավարությունը կորցնելու բան արդեն ընդհանուր առմամբ չունի, կարող է եւ պետք է արագ գործի:

Երկրորդ, եվրոպացիների կողմից Պաղեստինի ճանաչումը նշանակում է, որ այս քարտը որպես միջազգային դիվանագիտության գործիք նրանք վերջնականապես խաղից հանում են: Երկար տասնամյակների ընթացքում Արեւմուտքի երկրները չեն ճանաչել պաղեստինյան պետությունը՝ հասկանալով, որ կարելի է այս թեման շահագործել Իսրայելի, արաբական երկրների կամ որեւէ այլ մեկի հետ հարաբերություններում՝ կախված հանգամանքներից: Այժմ այս հասկացողությունը, ըստ ամենայնի, անհետացել է: Լոնդոնն ու Օտտավան շատ լավ հասկանում են, թե Իսրայելն ինչպես կարձագանքի իրենց որոշումներին, բայց պարզապես չեն տեսնում, թե ինչ օգուտ կարող են հետայսու իրենց համար քաղել Պաղեստինի հարցից: Այս իրավիճակում տրամաբանական է արագ շահաբաժին ստանալ, ապա ընդմիշտ մոռանալ Պաղեստինի մասին:

Եվ, վերջապես, Պաղեստինի պետությունը ճանաչելու Մեծ Բրիտանիայի, Ավստրալիայի ու Կանադայի կառավարությունների որոշումը համոզիչ ապացույց է այն բանի, որ հավանաբար դրա անգամ խորհրդանշական գոյության վերջը գալիս է: Պարզապես քանի որ Եվրոպան եւ նրան մոտ մտածողությամբ երկրները երբեք չեն անում այնպիսի բան, որի համար հետո հարկ կլինի կրել նվազագույն իսկ պատասխանատվություն: Այսպիսին է, ըստ էության, ժամանակակից արեւմտյան դիվանագիտության ոճը՝ ընդունել միայն այն որոշումները, որոնց համար ոչ մի պարագայում հարկ չի լինի վճարել իրենց ռեսուրսներով կամ անվտանգությամբ: Այս իմաստով մի շարք արեւմտյան երկրների կողմից Պաղեստինի ճանաչումը իսկական «մահվան համբույր» է, որից հետո բոլորի համար ամեն ինչ վերջնականապես պարզ է դառնում:

Այսպիսով, միջազգային դիվանագիտության տեսանկյունից, Պաղեստինի բուն գոյության հնարավորությունը փոխարինվում է Իսրայելին ուղղված ընդհանուր առմամբ աննշան մի քաղաքական խայթոցով: Մի միջոցառում, որը, նյարդայնացնելով Թել Ավիվին, ըստ էության ոչինչ չի փոխում: Այն նույնիսկ խթանում է Իսրայելի իշխանություններին՝ արագ վերջնականապես լուծել Պաղեստինի հարցը:

Ընդմին Մեծ Բրիտանիայի եւ Պաղեստինը հապշտապ ճանաչած այլ երկրների քաղաքական գործիչները կարելիին չափով լուծում են իրենց արտաքին ու ներքին քաղաքական խնդիրները: Նրանք իրենց նկատմամբ գլոբալ Հարավի երկրների որոշակի համակրանք են ավելացնում. չնայած բոլորը նաեւ հասկանում են, որ Պաղեստինի ճանաչումը չափազանց ուշացել է, բայց նման «ազնիվ» ժեստը հրապարակավ վիճարկել ոչ մեկը չի հանձն առնում: Ստացվում է մի քիչ ավելի շահեկան երեւալ ԱՄՆ-ի համեմատ, որն աներեր պաշտպանում է Իսրայելին: Իսկ դա անօգուտ չէ նաեւ Արեւմուտքի փոքր ու միջին երկրների համար. սրանք ներկայումս Վաշինգտոնում իրենց ավագ գործընկերների հետ հարաբերությունների ցավոտ վերագնահատում են կատարում: Մահմեդական աշխարհի կողմ ռեւերանսը կարող է օգտագործվել այն հարցի վերաբերյալ դժվարին բանակցություններում, թե որքան արտաքին-քաղաքական ինքնավարություն ամերիկացիները վերջին հաշվով կթողնեն իրենց արբանյակներին:

Իսրայելական հարցի շուրջ Ամերիկայի նկատմամբ թշնամաբար տրամադրվածների հետ խոսելու նրանց կարողությունը նույնպես լավ մանրադրամ է, երբ խոսքը վերաբերում է կոլեկտիվ Արեւմուտքի ներսում բարիքների վերաբաշխմանը: Իսկ մենք կասկած չունենք, որ նրա ընտրանիների համար հենց սա էլ ամենակարեւորն է ամբողջ աշխարհակարգում, հատկապես երբ բարիքների ծավալը կրճատվում է Չինաստանի, Հնդկաստանի եւ աճող համաշխարհային մեծամասնության այլ երկրների ճնշման ներքո:

Այդպես եւ եվրոպացի կամ կանադացի գործիչները կարող են շահել իրենց երկրներում մուսուլմանական համայնքների ձայները, որոնցում Արեւմուտքի անվերապահ աջակցությունն Իսրայելին միշտ ներքին լարվածություն է առաջացրել: Բայց նույնիսկ եթե էական օգուտներ այստեղ չլինեն էլ, թեկուզ գոնե հիմք կլինի մերժելու մերձավորարեւելյան հարցի վերաբերյալ ամեն մի քննադատություն:

Մնացած աշխարհի նկատմամբ բարոյական գերազանցությունը նույնպես մնում է իրենց քաղաքացիների հետ արեւմտյան էլիտաների երկխոսության կարեւոր տարր, մի փաստարկ, որը պետք է համոզի նրանց, թե իրենք դեռ ապրում են այդ առասպելական «ծաղկուն այգում»: Որովհետեւ արեւմտյան երկրներն ինչ էլ որ անեն, նրանք դա միշտ անում են միայն իրենց համար. սա է այնտեղ գոյություն ունեցող ներքին քաղաքական համաձայնության հիմքը:

**Թարգմանեց ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆԸ**

# ԱՐՏԱՇԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ













Մոսկվայից հայազգի հայտնի տնտեսագետ, ակադեմիկոս Արտաշես Միքայելյանը, իր «Յո երթաս» նորատիպ գրքի հետ մեզ է ուղարկել ներկա օրերի համար շատ այժմեական իր՝ հայերեն եւ ռուսերեն պատգամը (հատված՝ գրքից), որը հրապարակում ենք ստորեւ՝ նորընծա գրքի շապիկով

Մեծ ու Փոքր Արարատները՝ տիեզերքից կախված հսկա անլռելի զանգեր են, որոնք Երկրագնդի բոլոր մարդկանց ու պետություններին «հայտնում են», որ այդ տարածքների բնիկ բնակիչները հայերն են, իսկ այն հողերը, որտեղ նրանք ապրում են, նրանց Հայրենիքը՝ Հայաստանը!!!

**АРТАШЕС. МИКАЕЛЯН.** Большой и Малый Араpаты- Гигантские неумолкаемые колокола, висящие из Вселенной, которые всем людям и государствам Планеты Земля §говорят:, что коренные жители этих территорий - армяне, а земли, где они живут - их Родина Армения!!!

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԴ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 02.10.2025, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: